




Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

331.8

Փ-5

Պրոլետարներ բոլոր յերկրների միացե՛ք.

Յ Ա. Ֆ Ի Ն

9177

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ
ԱՐՀԵՍԱՐԱԿՑԻԿԱՆ ՃԱՐԺՄԱՆ
Ք Մ Ա Ն Տ Ա Ր Ի Ն

(ՀԱՊԵԼԱԸԾ ՀԱՅԵՍՏԱՆԻ ԱՐՀԵՍԱՐԱԿՑԻԿԱՆ
ՃԱՐԺՄԱՆ ՄԱՍԻՆ)

Թարգմ. ՀՄ. ՏԱՐԱԽԶՅԱՆ

№ 30

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏ. ԱՐԶԵՍ. ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ.

Յ Ե Ր Ե Վ Ս Ն

1925

331.88(47)
Փ-58

Հ. Ա. Մ. Խ-Ի ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՄԲ

ԼՈՒՅՍ ՏԵՍԱՆ ՅԵՎ ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

1. Ա. Լազովսկի—«Հոսանքների պայքարը համաշխարհային արհարծման մեջ» 24 էջ 15 կողմից.
2. Ա. Լազովսկի—«Արհմիությունների խնդիրներն ու դրոճելակերպը» 32 էջ 30 կողմից.
3. Եյդուս—«Ակնարկներ Արևելքի բանվորական շարժման մասին» 104 էջ 50 կողմից.
4. Արկ-Ան.—«Բանվորական շարժման պատմություն Անգլիայում, Ֆրանսիայում ու Գերմանիայում» 234 էջ 75 կողմից.
5. Գործկոմների և տեղկոմների ուղեցույց 293 էջ 1 ուղի.
6. Աշխատանքի Որենսգրքի 56 էջ 15 կողմից.
7. Անտոշին—«Պրոֆեսիոնալ շարժումը Ռուսաստանում» 102 էջ 60 կողմից.
8. Սենյուշկին—«Գործարկումների և տեղկոմների անելիքները ներկա պայմաններում» 83 էջ 25 կողմից.
9. Գուրիչ—«Լենինը և արհմիությունը» 84 էջ 50 կողմից.
10. Ֆարրիկանտ—«Սոցիալական ապահովագրությունը» 42 էջ 20 կողմից.
11. Տեաերին—«Ի՞նչ և Արհմիության կանոնադրությունը» 46 էջ 25 կողմից.
12. Սպերանսկի—«Ի՞նչ պետք և խմանա ամեն մի մայր» 21 էջ 25 կողմից.
13. Բիսոպսկի—«Բանվորների և ծառայողների ապահովագրությունը հաշմանդամության դեպքում» 24 էջ 20 կողմից.
14. Կանոնադրություն բանվորական գրադարանի 16 էջ 15 կ.
15. Զեկին—«Ակնարկներ բանվորական շարժման պատմությունից» 64 էջ 35 կողմից.
16. Բժ. Մելիքյան—«Միֆիլիս» 77 էջ 20 կողմից.
17. Բժ. Կարապետյան—«Մալարիա» 22 էջ 5 կողմից.
18. «Յերեք Ինտերնացիոնալ» 12 էջ 5 կողմից.
19. Գիրինիո—«Ի՞նչ և Արհմիության կանոնադրական Միությունը» 43 էջ 20 կողմից.

ՅԱ. ՖԻՆ

300
2720-Ի

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ
ԱՐԶԵՍԱԿՑԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ

== Ք Ս Ա Ն Տ Ա Ր Ի Ն ==

(Հավելվածով Հայաստանի Արհեստակցական բանվորական մասին).

Թարգ. ՀՄ. ՏԱՐԱԽՅԱՆ



№ 30 2001

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԵՍՏԱՆԻ ԱՐԶԵՍ. ՄԻՈՒԹ. ԽՈՐՀՐԳԻ

ՅԵՐԵՎԱՆ

1925

2010

27163-43

Շարված է «Լինոտիպով»



ՏՊԱԳՐԱԿԱՆ ՏՐԵՍՏԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ

Գրառեպլար 262 p. Պատվեր 1164 Տիրած 3000

6087-57

Ը Ն Թ Ե Ր Ց Ո Ղ Ի Ն

Այս գիրքը մի մատչելի, պարզ ու կենդանի գրվածք է, վոր քեզ կը ծանոթացնի Ռուսաստանի պրոֆչարթման պատմության հետ:

Կարգա այս գիրքը և քեզ համար յույսի պես կը պարզվի, թե Ռուսաստանի պրոֆմիությունները ինչպես են կազմակերպել բանվոր դասակարգը և -կոմկուսակցության ղեկավարությամբ ինչպես են նվաճել մեծ Հոկտեմբերը:

Այս գիրքը քեզ կասի, վոր պրոֆմիությունները ամենորյա անելիքն է՝ միլիոնավոր մուրճերով՝ ամբար պընդել Խորհրդային իշխանության սոցիալիստական անտեսությունը:

Կարգա՛, ուսանիր պրոֆմիության պատմությունը և պատրաստ յեղիր քո գիրքում: Քեզ անհրաժեշտ է լավ իմանալ նաև Հայաստանի արհչարթման պատմությունը: Հենց այդ պահանջին բավարարելու համար և, վոր գրքի վերջում տալիս ենք մեր պրոֆչարթման հակիրճ, սղմված պատմությունը:

Ներողամիտ յեղիր, շատ համառոտ և Հայաստանի արհչարթման պատմությունը:

Հ. Ա. Մ. Խ. Կուլտ-բաժին

ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԱՐՇԱԼՈՒՅՍԻՆ

Գործարանային բանվորների վիճակը.—Գործադու-
լային տարրերային պայքար.—Վոստիկանական կարիճ-
ները.—Փոխողնության գանձարկղները.—Գործադուլա-
յին գանձարկղները.—Տարրերայնությունից դեպի կող-
մակերպվածություն.—Գործարանային որենտդրություն.
—Բանվոր դասակարգի աճումը.—Սոցիալ-դեմոկրատա-
կան խմբակների ազդեցությունը:

Ռուսաստանում արդյունաբերության առաջ գալու և զարգա-
նալու հենց առաջին քայլերի հետ, բնականաբար, սկսվեց բան-
վորների պայքարը աշխատանքի լավագույն պայմանների համար:
Չափից դուրս յերկար բանվորական ուրը, չափազանց ցածր աշխա-
տավարձը, գործարանային աղմինխտրացիայի վոչնչով չսահմա-
նափակված կամայականությունը հաճախ պատճառ ելին դառնում
բանվորների բարկության տարրերային, սկզբնական շրջանում
անկազմակերպ, պոռթկումների առաջ գալուն:

Դեռ ևս ճորտատիրական շրջանի գործարանային կյանքը ծա-
նոթ և գործարանատերերի դեմ «ստրուկների» մղած լարված պայ-
քարի շատ զրվաղներին: Բավական և հիշել Ֆրյանովսկու մետաք-
սե մանուֆակտուրայի բանվորների յերկարատև և համառ կռիվը,
Ռոգորոդսկում, վոր նրանք մղում ելին ընտրովի ավագների (ста-
роста) պաշտոն սահմանելու համար. այդ ավագների պարտա-
կանությունն էր, «ամբողջ հասարակության» հանձնարարու-
թյամբ, հետևել գործարանում կարգ ու կանոնին և բանվորներին
սոճիկ բաժանելուն: Մինչև վոր 1800 թ. Պավել կայսեր տված ի-
րենց գանդատի պատասխանը կը ստացվեն, Ֆրյանովցիները գոր-
ծադուլ հայտարարեցին: Մտրակներով պատժելը և ուրիշ խտու-
թյունները չթուլացրին բանվորների յերոանդը, և 20 տարի անցնե-
լուց հետո, 1820 թվին նրանք սենատից իրավունք ստացան ընտ-
րելու 6 ավագներ, վորոնց իրավունք էր տրվում հետևելու «գոր-

ծարքային» («Сдельной») վարձի վճարելուն, աշխատավարձից հետ պահվող դումարների ճշտությանը և արհեստավորներին տրվող նյութերի ճիշտ ցուցակագրությանը:

Նման որինակներ կարելի չե շատ բերել:

Ճորտական իրավունքի վերացումից հետո, մանավանդ սկսած 70-ական թվականներից, գործադուլային պայքարը, այն ժամանակվա համար, մեծ չափեր է ընդունում: 1870 թ. Նեակի թղթի արտադրության, 1872 թ. Կրենգոլմի մանուֆակտուրայի, 1878 թ. Նոր թղթի արտադրության, և ուրիշ շատ գործադուլներ, վոր տնտեսական պահանջների հետ միասին պահանջում էին նաև, վոր բանվորներից ընտրվածներին ճանաչեն, ցույց են տալիս, վոր գործարաններում համառոտ են աճում և կեղեքողների դեմ կազմակերպված յեկույթների դիտակցությունը, բայց ազնվական-կալվածատիրական վոստրիկանական ուժերի իր ծանր թաթով խեղդում էր բանվոր դասակարգի ազատագրական շարժումը:

Դեռ ևս 1874 թվին պատիժների ցարական որենսդիրքը կարծնեցրով դարդարեց բանվորների ինքնակազմակերպման այն փորձերը, վորոնց նպատակն էր իրենց իրավունքները կոմով պաշտպանել:

«Տերերի յեվ բանվորների մեջ բշխամությունն առաջ բերելու, ինչպես և գործադուլների կազմակերպման դեղող միություններին պատկանելու մեջ մեղադրվողները», —ասում է Որենսդրելի 318-րդ հոդվածը, —«յենթակա յեն 8 ամսով բանտարկելությունից մինչև բոլոր հատուկ իրավունքներից ու արտոնություններից զրկվելուն և Սիրիւ աքսորվելուն»:

Յեթե ի նկատի առնենք այն դրակոնյան միջոցները, վոր իրոք կառավարությունը գործադրում էր վոչ միայն գործադուլների ղեկավարների դեմ, այլ և գործադուլավոր բանվորական մասնաշրջանի դեմ, յեթե հիշենք, թե ինչպես արյամբ ու յերկաթով էին խեղդվում վարձու աշխատանքի ավել կամ պակաս չափի խոչոր բորոտացումները շահագործողների դեմ, —այս դժվար չի պատկերացնելը, թե ինչ հակայական խոչընդոտներ կային բանվոր դասակարգի ճանապարհին՝ աշխատանքի լավագույն պայմաններին համար կազմակերպված պայքարի ձգտելիս:

Բանվորների գործողություններն ու մտքի ամեն մի ազատ արտահայթությունը խեղդող այդ դաժան միջոցները, ինչպես հետո կը տեսնենք, ամենախոչոր դրական դերը խաղացին Ռուսաստանի արհարժման մեջ, վորն իր առաջին քայլերից հենց ի մի

նույն, իրրե հակակշիռ արեմտա-յեվրոպական շարժման, տնտեսական և քաղաքական պայքարը՝ կապիտալիստական իրավակարգի դեմ պրոլետարիատի մղած հեղափոխական պայքարի այդ յերկու անքակտելի մասերը:

Սկզբնական շրջանում կազմակերպչական ինչ ձևեր ստացավ բանվորների ձգտումը դեպի ձևավորված պայքարը, վոր մղվում էր աշխատանքի լավագույն պայմանների, գործարաններում և զավոդներում իրենց իրավունքներն ընդարձակելու համար:

Արհեստակցական շարժման շատ հետադուրողներ հակված են ընդունելու, վոր 19-րդ դարում գոյություն ունեցող բազմազան գանձարկղները՝ թաղման, ոգնության, փոխադարձ ոգնության և այլ՝ արհեստակցական կազմակերպությունների նախորդներն են հանդիսանում: Դա արմատապես սխալ է: Ծիշտ է, Ռուսաստանում գանձարկղները շատ էին տարածված: Նրանցից շատերը առաջացել էին դեռ ևս տասնեկներորդ դարի սկզբին: Այսպես որինակ, լեհական Թագավորության մեջ առաջին գանձարկղներն առաջացան 1921 թ.: Պետերբուրգում 1838 թ. արդեն գոյություն ունեին տպագրիչների, տառ-ձուլողների, վիմագիրների գանձարկղները: Մերձբալթյան յերկրում 1898 թ. գործում էին արհեստավորների 98 ընկերություններ և գանձարկղներ և 113 համագասյին թաղման գանձարկղներ: Այդ կազմակերպությունների գործունեյության բնույթը համարյա բացառապես բարենորոգական էր: Նրանցից շատերի կազմի մեջ թույլ էին տալիս գործական և ձեռնարկուններին: Կապիտալի դեմ կոմվելու ինդիքը նրանց մեջ բոլորովին տեղ չունեին: Այս բոլորն հասկանալի չէ, վոր հնարավորություն չեն տալիս նմանություն անցկացնելու դասակարգերի և արհեստակցական միությունների միջև:

Ավելի ճիշտ կը լիներ, յեթե արհեստակցական միավորումները սաղմային ձև համարենք այն հատուկ կազմակերպությունները, վորոնք ստեղծվել սկսեցին անցյալ դարու 80-ական թվականներին և վորոնց նպատակն էր ոժանդակելու գործադուլներին և ղեկավարել ու նրանց կիրառելը:

Պայքարի առաջին գանձարկղը ստեղծվեց Հյուսիս-Արեմտյան յերկրում, Վիրնոյում, գուլպայագործների մեջ, 1888 թ.: Դրանից հետո նույն տեղում ստեղծվեցին ղերձակների և ձեռնների գանձարկղները: 1984 թ. Վարչավայում գանձարկղներ կազմակերպվեցին հրեյա բանվորների մի քանի արհեստակցական խմբ-

բակները մեջ. Մինսկում, գործադուլային պայքարի ազդեցությամբ տակ, ձևակերպվում են 4 արհեստակցական միություններ, թեև ճիշտ է, անդամների շատ աննշան քանակով:

Թե վորքան նշանակալից եր պայքարի գանձարկիչների դերը Ռուսաստանի արևմուտքում, առավելապես հրեյա պրոլետարիատի մեջ, յերևում է նրանից, վոր 1900 թ. գանձարկիչների մեջ կազմակերպված բանվորների թիվը այնպիսի քաղաքներում, ինչպես Բելոստոկն է, Վիլնան, Մինսկը, առաանվում է ամբողջ բանվորութան 20 մինչև 40 տոկոսը: Ինչպես հայտնի յե, հետագայում այդ գործադուլային գանձարկիչները հիմք դառան կուսակցական արհեստակցական միությունների, վորոնք յերկար ժամանակ գտնվում էին հրեյական սոցիալ-դեմոկրատ կուսակցութան՝ «Բուդկի» բացարձակ ղեկավարութան տակ:

Ծնորհիվ գործադուլային գանձարկիչների և սոցիալ դեմոկրատական խմբակների ազդեցութան բանվորական շարժման սարերբայնությունն ու անկազմակերպվածությունն աստիճանաբար սկսեց տեղի տալ պլանաչափութան, համերաշխութան և կարգապահութան, վորով և բնորոշվում եր 90-ական և 900-ական թվականների գործադուլային պայքարը:

Կազմակերպվածության շրջանը տարրերայնության շերտից բաժանող առաջին ակոսի հիմքը դրեց Սովվա Մորոզովի Նիկոլ-սկի մանուֆակտուրայի իր դիմացկանությամբ հռչակավոր գործադուլը, 1885 թ. սկզբին: Գործադուլը պատրաստված եր բանվորներից ընտրվածների նախնական ժողովներում, բանվորներից ընտրվածների մեջ աչքի յեր ընկնում ուսական գործադուլի պատը, 1923 թ. մեռած րնկ. Մոյսեսյենկոն: Խոզեյներին առաջադրած պահանջներից ուշադրութան արժանի յեն՝ վարձելու պայմանները փոփոխելու, մի շարք ծառայողների և արհեստավորների հեռացման, արտելներում աղատորեն ավազ ընտրելու պահանջը, պահանջվում եր նաև, վոր իրավունք տրվի վերջիններին յերեք ամիսը մեկ անգամ վերընտրել, պատահական անպետք ընտրյալներից ազատ լինելու նպատակով:

Գործադուլը պարտվեց: Ընտրվածներին զորքը ձերբակալեց: Բանվորների փորձը՝ ազատելու իրենց առաջնորդներին, չհաջողվեց: Բանվորների որինական պահանջներին կառավարութունը պատասխանեց ձերբակալելով և աքսորելով ամբլի, քան 800 բանվորի:

Բայց այդ գործադուլը, ինչպես բանվորների պայքարի ուրիշ խոշոր բռնկումները, անհետևանք չմնացին: Ցարական կառավարութունը անձամբ համոզվեց, վոր մեզ մոտ արդեն գոյութուն ունի կռվի և դիմադրութան ընդունակ բանվոր դասակարգ: Նա ստիպված եր, առանց խտություններով սահմանափակվելու, խառնվելու կապիտալի և աշխատանքի փոխհարաբերություններին՝ հրատարակելով համապատասխան որենքներ:

Դեռ ևս առաջ, իբրև հետևանք 70-ական թվականների գործադուլային պայքարի, 1882 թ. հրատարակվեց մի որենք, վորով արգելվում եր մինչև 12 տարեկան հասակի յերեխաների աշխատանքը և սահմանվում եր 8-ժամյա բանվորական որ 12—15 տարեկանների համար: 80-ական թվականներին գործադուլների հետևանքն եր 1885 թ. որենքը, վորով արգելվում է կանանց և մինչև 17 տարեկան գեռահասների աշխատանքը բամբակագործական, քաթանի և բրդեղենի գործարաններում: Իսկ մեր նկարագրած Մորոզովյան գործադուլը առաջ բերեց 1886 թ. որենքը, վորը սահմանափակում է գործարանատերերի կամայականությունը բանվորական ույժի վարձելու ասպարիզում, իսկ նույն տարվա հոկտեմբերին հրատարակվեցին կանոններ, վորով գործարանային ձեռնարկությունների ներքին կարգապահութան հարցերը յենթարկվում են գործարանային տեսչութան հսկողության:

Ինչպես տեսնում ենք, ցարական կառավարության գործարանային որենքությունը ակամա, ուշացած և խիստ կիսատ-պուստ սլատասխան եր բանվորների մարտական յելույթներին: Բայց արդյունաբերողների ճնշման տակ, բազմաթիվ պարզաբանումներով և շրջաբերականներով այդ որենքները ի չիք էլին դարձվում: Այսպես որինակ, 1882 թ. ստեղծված գործարանային տեսչութունը, վորի նպատակն եր միջնորդ լինել ձեռնարկուների և բանվորների միջև, պարզաբանումների միջոցով դարձավ փոստիկանության աղետուրան գործարանում: 1896 թ. Պետերբուրգի մանվածքային գործարանների 35,000 բանվորների հակաշական գործադուլի շնորհիվ ցարիզմից խլված 1897 թ. որենքը, վորով բանվորական որվա տեսչությունը սահմանվում եր 11 և կես ժամ, իսկ դիչերային աշխատանքին—10 ժամ, մի տարուց հետո փաստորեն վերացվեց մի շրջաբերականով, վորը թույլ եր տալիս արտաժամյա աշխատանքների գործադրությունը անսահմանափակ չափով:

Բայց արդյունաբերողների սանձով շարժվող ցարական կառավարության բոլոր նուրբ հնարագիտությունները չէին կանգնեցնում, այլ ընդհակառակը ուժեղացնում էին բանվոր դասակարգի պայքարը, վորը անցյալ դարի վերջերին ձևակերպվեց և դարձավ մի լուրջ, հակադր ույթ: Բանվոր դասակարգը, վորը ճորտական իրավունքի վերացումից հետո առաջին տարիներում իր շարքերում ուներ 700,000 մարդ, 1890 թվին հասավ մինչև 1,432,000 մարդու, իսկ 1900 թվականին մեր ձեռնարկություններում արդեն աչխատում էին 3,000,000 պրոլետարներ: Այդ ակնածելի բանակը դուրս յեկավ առանձին-առանձին գործարանների սահմաններից, զգաց իր շահերի միասնության և գործողությունների միաձուլության և կազմակերպվածության անհրաժեշտությունը: Այս գործում մեծ դեր խաղացին 80-ական թվականների վերջերին և 90-ական թվականների ընթացքում Ռուսաստանի մի շարք արդյունաբերական քաղաքներում ստեղծված բազմաթիվ սոցիալ-դեմոկրատական խմբակների ազդեցությունը, ագիտացիան և կազմակերպչական գեկավարությունը: Այդ խմբակները, վորոնց մեջ առանձնապես աչքի ընկնող տեղ եր բոնում Պետերբուրգում 1895 թ. ստեղծված «Հանուն բանվոր դասակարգի ազատագրման պայքարի միություն» խմբակը, բանվորների պայքարի սլաքը ուղղում էին վոչ միայն ինքնակալության դեմ գործարանում, այլև վոստրիկանական-ազնավական ուժի դեմ յերկրում, վորի վոչնչացումը միայն կարող եր ասպարեզ բանալ պրոլետարիատի հաջող պայքարի համար:

Ցարական կառավարություն, իհարկե, չեր կարող ստանա-սիրա կերպով անցնել այդ, իրեն համար չափազանց վտանգավոր, յերևույթի մոտով: Պետք եր շտապ կերպով միջոցներ գտնել մեկուսացնելու բանվորներին «կրոնամոլներին» «չարավնաս և քայ-քայիչ» ազդեցությունից: Ռուսական վոստրիկանություն և ախրան-կայի բնածին ստեղծագործությունը շտապեց այդ միջոցները գտնելու:

«ՎՈՍՏՐԻԿԱՆԱԿԱՆ» ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Պահնորդական բաժանմունքի թեի տակ.—վոստրիկանական գործարանային սահմանադրություն.—Առաջին լեզալ ընկերությունները.—Բանվորներն անցնում են սահմանը.—Զուրատովչինայի վերջը.—Որոնք ավագների մասին.—Գապոնովչինա.—1905 թ. հունվարի Գր:

Բանվորների անբավականությունը, իրենց վրա ծանրացած տնտեսական ճնշումից, աճում և խորանում եր: 1898 թ. սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունները ձուլվեցին և կազմեցին սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցություն: Այդ սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների պրոպագանդայի և ագիտացիայի շնորհիվ առաջավոր, ավելի գիտակից բանվորներն սկսում են գիտակցել, վոր տնտեսական պայքարն անբաժանելի յե քաղաքականից: Ծավալված բանվորական շարժման թափից և բանվորությունից վախեցած, ցարական վոստրիկանությունը վրձնում և հեռացնել ուսական պրոլետարիատի ուշադրությունն ինքնակալության դեմ պայքարելուց. այդ նպատակի համար վորոշվում և բանվորների մանր տնտեսական շահերի պաշտպանություն հողի վրա, համախմբել նրանց իր, վոստրիկանության թեի տակ:

Այս «ձեռնարկության» ամբողջ իմաստությունը ձևակերպված և ավագ-վոստրիկանապես Տրեպովի գեկուցագրի մեջ, վորտեղ ասվում և.

«Գործադուլների (տնտեսական հողի վրա) հաջողությունը, հանգիստանալով բանվորների համար իբրե քաղաքական դաստիարակության դպրոց, չափազանց վտանգավոր և վնասակար պետական նշանակություն ունի: Պայքարի հաջողությունը բանվորներին հավատ և ներշնչում դեպի իրենց ուժերը, սովորեցնում և նրանց պայքարի գործնական յեղանակները, նախապատրաստում և առաջ և քաշում նրանց միջից ընդունակ նախաձեռնողների, համոզում և բանվորին, վոր կոլլեկտիվ գործողությունները հնարավոր են և ոգտակար, զարգացնում և դասակարգային պայքարի անհրաժեշտության գիտակցությունը... Հեղափոխության ամբողջ հե-

տաքերը թուլությունը կենտրոնացված է գործարանային միջավայրում, իսկ վորտեղ վոր հեղափոխականն է տեղավորվում, այդտեղ պետք է լինի նաև պետական վոստիկանությունը»...

Այդ գաղափարի նախաձեռնողի և վորդեորողի—Մոսկվայի պահանջողական բաժանմունքի պետ Չուբատովի—նախագծով դժվոր է մի յուրատեսակ գործարանային սահմանադրություն: Համաձայն այդ նախագծի, «գործարանային բանվորների իրավունքների ընդլայնումը կատարվելու յե յուրաքանչյուր գործարանի բանվորների համախմբումով և մի ամբողջություն կազմելով, վորն ունենալու յե իր անդամներից բաղկացած կոմիտե, վորոնց ընտրելու յեն իրենց միջից յերկու սեռի բանվորները: Այդ կոմիտեները մշակելու յեն բանվորների համար ցանկալի փոփոխությունները գնահատումների, տակսանների, բանվորական ժամանակի բաշխման և ընդհանրապես ներքին կարգապահություն կանոնների մեջ: Տերն անմիջապես հարաբերություն չի պահպանում բանվորների հետ, այլ միայն կոմիտեյի միջոցով»...

Այսպիսով, բանվորների նվիրական մտադրությունը՝ գործարաններում ունենալ իր ընտրովի մարմինները՝ իրագործվում է, բայց դժբախտաբար նրա վրա սավառնում է պահանջողական բաժանմունքի նեխած դավաճանական հոգին, վորն իր ձեռքում էր կենտրոնացրել հակոդությունը կոմիտեների և միությունների (ընկերությունների) վրա և ամեն միջոց գործ էր դնում, վորպեսզի բանվորական կազմակերպություններից դուրս վտարեր կենդանի վոգին:

Այսպիսով, առաջին անգամ յերևան է դալիս բանվորների ինքնատեսակ վոստիկանական արհեստակցական համախմբումները: 1901 թ. վերջին Մոսկվայում ստեղծվում է «Մեխանիքական Արտադրության բանվորների ընկերությունը»: 1902 թ. դեկտեմբերին սկսվեց ցուցակագրություն «Ջուհակների ընկերության» մեջ, վորի մեջ բացման որը—1903 թ. հունվարի 19—ին, — հաշվվում էր մոտ 800 մարդ: Հետո սկսում են կազմակերպվել կոնսակագործները, անուշարանները, ոճանելիքագործները, ծխախոտագործները: Վոչ առանց վորոչ հաջողության նման կազմակերպությունները ստեղծում են Ադեսայում Շահիչի դեկավարությունը, Մինսկում՝ ժանդարմական սպա Վասիլի մասնակցությամբ: Բայց ինչպես վոր պետք է լինի, վոստիկանության սնած շարժումը չուտով դարձավ իրենց կազմակերպիչների և ինստակալների դեմ:

Այդ կազմակերպությունները լայնացնելու, նրանց մեջ բանվորների միջին լայն մասսաները գրավելու ջնդրով, նրանք փոխոգնություն հարցերից, դասախոսություններից և զեկուցումներից անցան ձեռնարկումների դեմ կովելուն: Վորպեսզի բանվորներին իրենց կողմը պահեն, վոստիկանությունը քանի դրնաց, այնքան միջին հաճախ ստիպված էր խառնվելու պայքարի մեջ և սպառնալիքներով ստիպելու տերերին՝ բանվորներին դիջումներ կատարելու համար:

Բնական է, վոր գործարանատերերը ձեռ ու վոտ ընկան: Նրանք իրենց համար հնարավոր չեյին համարում մնալ իբրեկ կողմնակի դիտող իրենց աչքերի առաջ վոստիկանության կատարած փորձերին և յետանդուն կերպով սկսեցին բողոքել կետնրոնական իշխանությանը՝ իրենց իրավունքները խախտելու դեմ: Այդ բողոքները լավեցին, մանավանդ, վոր բանվորներն արդեն շատ առաջ անցան այն սահմաններից, չըջանակներից, վոր վոստիկանությունը դժել էր նրանց գործողությունների համար և ծավալեցին լայն գործադուլային մի պայքար, վորը հաճախ, ինչպես այդ տեղի ունեցավ Ռուսաստանի հարավում 1903 թվին, վառ քաղաքական բնույթ էր կրում:

Չուբատովի կարյերան վերջացավ Վոլոգդա աքսորվելով, բանվորների շարքերում «բարեհուսություն» պատվաստելը մեռավ: Բայց դա յերկարատե չէր:

Բանվորներին հանդատացնելու համար կառավարությունը նորից ձեռք զարկեց կիսատ—պռատ որենսդրական—ստեղծագործական իր վորձած մեթոդին: 1903 թվի հունիսի 10—ին հրատարակվեց մի որենք ավագների մասին, վորի նպատակն էր մի կողմից վերջ առլ բանվորների հուզմունքներին, և մյուս կողմից՝ ապահովելու գործարանատերերի շահերը: Յեվ վերջին հաշվով այդ որենքը չբավարարեց վոչ մեկին, վոչ էլ մյուսին: Այդ որենքը հրատարակվելուց հետո, սկետական խորհուրդն արգելեց բանվորների ընդհանուր ժողովները: Ավագները կարող էյին ընտրվել միմիայն համախմբություններում: Բանվորները կարող էյին միայն թեկնածուներ առաջարկել, վորոնցից ձեռնարկատերերը հաստատում էյին իրենց հարկավոր մարդկանց: Բանվոր ներկայացուցիչների համար հասակային ցենդը սահմանվեց 25 տարեկան հասակը: Յեվ վերջապես, որենքը նախատեսում էր, թե՛ «իրենց կոչմանը չբավարարող

ավագները նահանգապետի կարգադրութեամբ կարող են հեռացվել իրենց պարտականութիւնները կատարելուց նաև այն ժամկետից չուտ, վորի համար նրանք ընտրված են»:

Բոլորովին հասկանալի չէ, վոր «մաղված և ջուկած» ավագների ալիքիսի հաստատութիւնից բանվորների մասսան ընդհանրապես հրաժարվեց: Ավագներ ընտրվեցին ընդամենը 30—40 ձեռնարկութիւններում: 39 նահանգներում ավագներին վերաբերող որենքի գործադրութեան մեջ վոչ մի դեպք չէր զուլ:

Այդ որենքի դեմ, ի հարկէ այլ պատճառներով, դուրս չեկան արդիւնաբերողները: Նրանք շատ ճիշտ կերպով հաստատում էին, վոր վոստիկանութեան ղեկավարութեամբ ընթացող ավագներն անմիջապէս կը կորցնեն բանվորների վստահութիւնը, և վոր բանվորներն որենքի սահմանից կանցնեն և «վորքան ուշ, այնքան ավելի դժվար կը լինի կարգավորել կամ զակերպված և իրենց կազմակերպվածութեամբ ուժեղ բանվորական մասսաների հզոր կամքը, վորոնք արհեստականորեն ձուլված են մի ամբողջութեան մեջ»:

Արդիւնաբերողների նախատեսածը շուտով արդարացավ: Բայց մինչև այդ Ռուսաստանի պրոլետարիատը պետք էր, վոր վերջնականապէս ազատվեր ցարական ռեակցիոն ինքնակալութեան հետ միութիւն կամ զելու վորեւէ հնարավորութեան նկատմամբ հավատ ունենալուց: Այդ բանին նպաստեց 1905 թ. արյունոտ Հունվարի 9-ը:

1901—1903 թվերի վոստիկանական փորձերը նորից հարութիւն առան 1904 թ. ի դեմս «Ս. Պետերբուրգի ռուս գործարանային բանվորների ընկերութեան», վորն ստեղծվեց ներքին գործերի մինիստր Պլեվէյի և Անտոնիոս միտրոպոլիտի որհնութեամբ «բանվորների մեջ ռուս ազգային դիտակցութիւնը վառ պահելու և ամրացնելու համար»: Ընկերութեան փառտական ղեկավարը հայտնի Գարոն քահանան էր:

«Ընկերութիւնն» իր գործունեութիւնը սկսելով նրանից, վոր «պաշտելի միապետի վոտքերի տակ փոքեց բանվորների ամենահպատակ զգացումները, վորոնք վոզեւորված են խանդավառ սիրով դեպի զահն ու հայրենիքը», կարճ ժամանակից հետո ստիպված էր դառնորեն հիասթափվել իր միամտութեան համար: Մեծանալով և մի քանի ամսվա ընթացքում դառնալով մի բավական ստվար, ակնածելի միավորութիւն, վորն իր մեջ ընդգրկել էր մայրաքաղաքի բանվորներից

8000-ից ավելին, ընկերութիւնն զգաց, վոր ինքը դառել է մի կազմակերպված ուժ, վոր ընդունակ է իրեն հակադրելու կապիտալիստների ճնշմանը: Յեւ, իրոք, Պետիլովի գործարանում, շնորհիվ մի քանի բանվորների արձակման առաջացած գործադուլը շուտով հակառակն չափերի հասավ, վոր 1905 թվի հունվարի 7-ին գործադուլային ալիքի մեջ քաջեց մինչև 140,000 բանվոր:

Այն հավատը, վոր դահը պաշտօնն է կանգնելու «այս թուլերին», հավատը, թե՛ հայր-թագավորը լավ է, միայն նրա մինիստրներն են վատ, բանվորների մեջ այնքան էր մեծ, վոր նրանք իրենց պայքարի հաջողութիւնը կապում էին ցարի ուշադրութեան հետ: Բայց խաչ ու խաչվառով դեպի պալատը շարժվող մեծ մանիֆեստացիան դարձավ արյունալի մի վոլդերգութիւն: Հարյուրավոր սպանվածներ ու վիրավորվածներ իրենց արյամբ գետինը վոռեցին: Ամենահպատակ պետիցիան (խնդրագիր) վորի վրա իրենց հուշն էին դրել վոստիկանական և տերտերական (կրոնական) թրմերից դեռ ևս չթափված բանվորները, ցեխի մեջ տորովեց և անպաշտօն մարդկանց անմեղ արյունով շաղախվեց:

ԱՐՇԵՍՏԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱԳՈՒՄԸ

Հունվարյան դեպքերի արձագանքները — Առաջին արհեստակցական միությունների կազմակերպումը — 1905 թ. աշնան պայքարի սկիզբը — Ընդհանուր գործադուլ — Կառավարության կապիտուլյացիան:

Հունվարյան դեպքերը բանվորների աչքերը բացին: Արյունալի գոհերը սրբազորվեցին Պիտերի բանվորների առաջադրած պահանջները, վորոնք Ռուսաստանի ամբողջ պրոլետարիատի համար դարձան պայքարի գրոչակ: Դժբախտ փորձով պարզվեց այն համարությունը, թե՛ «բանվորների ազատագրումը միայն իրենց բանվորների գործը կարող է լինել»:

Պետերբուրգի դեպքերը հսկայական արձագանք գտան: Անձայրածիր Ռուսաստանի բոլոր արդյունաբերական կենտրոններում բանվորական մասսաները շարժվեցին: Բողոքի և համերաշխության գործադուլները, քաղաքական ազատություններ և հիմնադիր ժողով պահանջող գործադուլները ընդգրկեցին ամբողջ, քան կես միլիոն պրոլետարների: Ստալկյունների հին մեթոդները, վոր դեռ ևս գործադրվում էին բանվորների դեմ, այլևս չէին կարող վիճակել ցարական կառավարության նախկին ուժով, այլ ընդհակառակը՝ չեղում և ընդդոմ էին Ֆիդիբախյան և բարոյական քայքայումը:

Դրանով ոգավեցին բանվորական մասսաները, վորոնք սուր կարիք էին զգում համախմբելու իրենց ցած ու ցրվ ուժերը, զգում էին խիստ անհրաժեշտություն իրենց կազմակերպություններն ստեղծելու, վորոնք կապահովեին գործողությունների միասնությունը, համաչափությունն ու հաջողությունը կոչում:

Տնտեսական պայքարը ղեկավարելու համար ինքնազուլի կերպով սկսում են ստեղծվել առաջին մարտական կազմակերպությունները՝ արհեստակցական միությունները:

Առաջին շարքերում ընթանում էին մայրաքաղաքները, վորոնք պայքարն առանձնապես սուր բնույթ էր կրում: Առաջին միությունը, վորը ստեղծվեց Պետերբուրգում, իբր հետևանք բախկանին յերկարատև ընդմիջումով գործադուլային պայքարի,

ի, տպագրական գործի բանվորները միություն կազմակերպելու վճիռն ընդունվեց 1905 թ. սեպտեմբերին, կանոնադրությունը հաստատվեց հունիսի 21-ի ընդհանուր ժողովում, իսկ հուլիսի 1-ից միությունն սկսեց իր գործունեությունը: Միությունական կազմակերպությունը իր առաջին քայլերից հենց սկսեց ընդարձակվել, փնտրում և գտնում է իր անդամների հետ կապ հաստատելու մեթոդները՝ ամբողջ ակտիվ անդամներից «ոպյունական ժողովներ» կազմակերպելու և տպագրական ձեռնարկություններում ընտրական ինստիտուտ հաստատելու միջոցով, վորոնք ըստ իրենց կազմի և գործառնությունների մոտ էն ներկայիս համաքաղաքային պատգամավորական ժողովներին:

Մոտավորապես նույն ժամանակ սկսվում է ձևակերպվել Պետերբուրգի գրասենյակային ծառայողների և հաշվապահների միությունը: Միաժամանակ կիսալեզալ կերպով սկսում են գործել գործակատարների և դեղագործների միությունները: Արհեստավորներին ամբողջ գծավարություն հաջողվեց ձևակերպել իրենց կազմակերպությունները, շնորհիվ արհեստակցական վարչության (управа) չուրջը համախմբված խողեյինների կազմակերպության և դիմադրության: Կոչկակարների, դերձակների և ժամագործների միություններն ստիպված էին մինչև հոկտեմբերյան սերը իրենց գոյությունը պահպանել զաղանարանում, ընդհատակյա (подпольно):

Նույն ժամանակաշրջանին և վերաբերվում է 1905 թ. դարնանք և ամառը, — և արհեստակցական միությունների առաջ գալը մոսկվայում: Այստեղ, ինչպես և Պետերբուրգում, ամենից առաջ ձևակերպվեց տպագրական բանվորների միությունը: Դեռ ևս 1905 թ. մոսկվայում անլեզալ կերպով գոյություն ուներ արհեստակցական միության հետևյալ անվան տակ. «Մոսկվայի տպագրական-վիճակագրական բանվորների միություն», հիմնված աշխատանքի պայմանների բարելավման նպատակով պայքարելու համար: Նրա գոյության անլեզալ պայմանները և իբրև բողոք-ցույցի մաս Ռուսաստանի Սոցիալ-դեմոկրատական կուսակցության մեջ մտնելու հանդամանքը սահմանափակեցին միության քանակական կազմը: Նրան գուդահեռ 1905 թ. բացված Պետերբուրգի տպագրական գործի բանվորների միության բաժանմունքը հարկավոր ուղեկցություն չուներ: Միասնական կազմակերպություն ստեղծելու պահանջը թեկադրում էր անտեսական պայքարի



ուր կերպարանք ստացած հանգամանքներով, և սեպտեմբերյան զործադուլից հետո, վոր ընդգրկեց 6000 բանվոր-աղաղրիչներին, ստեղծվեց տաղարական բանվորների Մոսկվայի միությունը:

Հունիսին Մոսկվայում կազմակերպվեց առևտրա-արդյունաբերական ծառայողների միություն: Սոցիալ-Դեմոկրատ բուլշևիկներին Մոսկվայի Կոմիտեյի ուղևորությամբ ստեղծվեց բուլշևիկների միությունը: Մոսկվայի ջուհիների մեջ միութենական կազմակերպություններ ստեղծելու փորձը մենչևիկներին կողմից, անհաջող անցավ:

Մի փոքր ուշ մայրաքաղաքների զործադուլյուններին հետևեցին և գավառները: Այսպիսով, 1905 թիվը փաստորեն հանդիսանում է մարտական դասակարգային կազմակերպությունների արհեստակցական միությունների շինարարության առաջին տարին:

Արհեստակցական շարժման ավելի լայն զարգացումն Ռուսաստանում սկսվում է, ընդհանուր առմամբ, միայն 1905 թ. աշնանը և գլխավորապես, հոկտեմբերյան զեպերից հետո, «սպառնալից» օրերին: Այնպես կոչված սկիզբը, առաջին սույնիչը, վորին կոչվեց արձագանքեցին պրոլետարական լայն մասսաները, հանդիսացավ Սիբիրի և ընկ. տաղարական-վիճադարական բանվորների զործադուլը Մոսկվայում, վորը վերածվեց տաղարական զործի բանվորների ընդհանուր քաղաքային զործադուլի, վոր ընդգրկեց մինչև 10,000 մարդ: Գործադուլի գլուխն անցավ 11) ձեռնարկությունների կողմից բնորոշված «պատգամավորների խորհուրդը»: Չնայած բոլոր արգելքներին և խոչնդոտներին, տաղարիչները յետանգուն կերպով պաշտպանում էին իրենց զործը, ցրելով իրենց ճանապարհից ցարական մոստիկանությունների բոլոր դիմադրությունը:

Մոսկվայի տաղարիչների շարժումը ուժեղացավ բանվորներին ու խմբերին նմանորենակ շարժումով: Սեպտեմբերի վերջին զործադուլ հայտարարեցին Ֆիլիպպովի բուլշևիկները, բոս փորում, չնորհիվ նրան, վոր զործերը խառնվեցին զործադուլին, վերջինս ստանձնապես բուսն կերպարանք ստացավ: Հոկտեմբերի սկզբին, ի նշան համերաշխության, Պետերբուրգի զբաղվողներն ու տաղարիչները անցկացրին յերեքօրյա զործադուլ: Վերջիններին միացան պետական լիդիեր պատրաստելու եքսպեդիցիայի բանվորները: Միաժամանակ զործադուլ հայտարարեց Նեոկի նավաշինարարա-

կան գործարանը: Ընդհանուր հուզմունքի միջոցառումն էլ ավելի յեր խտանում չնորհիվ այն հանգամանքի, վոր կառավարությունը զործադուլավորների դեմ զորք եր դուրս հանում: Ամբողջ Ռուսաստանն այդ ժամանակ ներկայացնում եր պրոլետարական մարտիկների զգաստ ու լարված մի բանակ, վորոնք մի արտաքին դրդումի ելին սպասում, վոր նետվեյին կռվի մեջ:

Մոսկվայի յերկաթուղային հանգույցի հանկարծակի բռնկված զործադուլը հակապական ուղևորություն յեղավ արդեն ծավալված բանվորական շարժման համար և պրոլետարիատի ձեռքը տվեց մի սլաքարի հզոր միջոց:

Վախենալով, վոր կարող են ցրել Պետրոգրադում տեղի ունեցող յերկաթուղային ծառայողների համադուլարը, զործադուլային հոսանքի պայմաններում, վոր սկսեց տարածվել յերկրում, հակաեմբերի 7-ին սկսեց Մոսկվա-կայան յերկաթուղագծի մեքենավարների զործադուլը: Հետևյալ օրը նրանց միացան ճանապարհի վարչուլարչությունը, հեռագիրը, յերկաթուղային արհեստանոցները և, վերջապես, կանգ առան մարդատար գնացքները: Հոկտեմբերի 8-ին զործադուլին միացան Նիժնի-Նովգորոդ-Մուրոմի, Յարասլավլի, Մոսկվա-Կուրսկի, Ռյազան-Ուրալի յերկաթուղագրծերը: Հոկտեմբերի 10-ին դադարեց շարժումը Մոսկվա-Վինգավյան, Նիկոլայայան և Բրեստի յերկաթուղագծերում: Հոկտեմբերի 11-ին մեկը մյուսի հետևից սկսեցին զործադուլին միանալ զործարաններն ու գավուղները: Իրենց աշխատանքները դադարեցրին հեռագրի ծառայողները, պոստը, ելեքտրոկայարանը, ելեքտրոքաչը: Հոկտեմբերի 12-ին մարեց շարժումը Պետերբուրգի հանգույցում, իսկ մի օր հետո կանգ առավ և մայրաքաղաքի զործնական կյանքը:

Մոսկվային և Պետրոգրադին հետևեց ամբողջ Ռուսաստանը, վորը շուտով բռնվեց յերկաթուղային կաթվածով: Այս անգամ արդեն ցարական կառավարությունը անցոր գտնվեց և բանվորների հզոր գրոհի առաջ տեղի տվեց և անձնատուր յեղավ:

Տանջանքներով ծնվեց կարճատև կյանք ունեցող մանիֆեստը (հրովարտակր), վոր սպառարեց աղատություն և սահմանադրություն հայտարարեց:

ՆԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԵՏՈ

Միութենական չինարարության փոփոխիկը.—Արհմիությունների առաջին կոնֆերենցիան.—Դեկտեմբ. ասորությունը Մոսկվայում.—Յերկրորդ կոնֆերենցիան.— Միությունների մասին որենքի նախագիծը.— 1906 թ. մարտի 4-ի որենքը.— Ռեակցիայի արշավը:

Հեղափոխության առաջին որերը լայն ասպարեզ բացին պրոլետարիատի համախմբվելու և իր գործը մարտական տնտեսական կազմակերպություններն ստեղծելու ձգտման առաջ: 1905 թ. վերջին Պետերբուրգում արդեն կային 14 առանձին արհեստակցական միություններ, վորոնք համախմբում էին 35,000 մարդ: Մոսկվայում հաշվվում էր մոտ 50 միություն, 25,000 մարդով. Արհեստակցական կազմակերպություններ կառուցելու փոփոխիկը գնաց առաջ, և 1906 թ. սկզբին համարյա չկար արդյունաբերական վոչ մի կենտրոն, վորտեղ արհեստակցական միություններ չլինեին:

Բայց քաղաքական հաղթանակի ազդեցության տակ այդքան արագ կերպով առաջ չեկած արհեստակցական կազմակերպությունները գուրկ էլին ներքին կազմակերպչական և նյութական ամբողջության, վորովհետև լայնությամբ տարածվելով, միությունները կարճ ժամանակով ընթացքում չկարողացան իրենց աշխատանքները ծավալել ղեպի խորքը: Արհեստակցական շարժման զիմացկանություն վրա ազդում էր և այն, վոր գործարանային բանվորները, վորոնք կապիտալի և ցարական կառավարության դեմ մղվող պայքարի հիմքն են հանդիսանում, ավելի ուշ կարողացան ձեռք գտնել իրենց միավորումներն ստեղծելու գործին՝ միայն 1906 թ. գարնանից: Ահա թե ինչու մի շարք միավորություններ չկարողացան ղիմանալ սեակցիային, վորն իր ճիւղաններն արդեն սկսել էր ցույց տալ հենց Մոսկվայի դեկտեմբերյան ապստամբությունը (1905 թ.) պարտվելուց հետո:

Իրենց զարգացման հենց առաջին որից Ռուսաստանի արհեստակցական միությունները շատ լավ հասկանում էին, վոր իրենց ույթը միատեսակ կազմակերպությունները միասնական ազդային

միություններին մեջ միացնելու և աշխատանքը տերիտորյալ (տեղական) և համազգային (համապետական) մասշտաբով համաձայնեցնելու մեջ և: Արդեն 1905 թ. սեպտեմբերի վերջին և հոկտեմբերի սկզբին Մոսկվայում տեղի ուներ առաջին կոնֆերենցիան, վաստորեն արհեստակցական միությունների խորհրդակցություն, վորին ներկա էին Մոսկվայի և այլ քաղաքներից մոտ 30 կազմակերպություն: Այդ կոնֆերենցիայում վորոշվեց դեկտեմբերին հրավիրել համագումար, վորին իրավունք ստացան մասնակցելու միայն «փոխդնությունների գանձարկներից և արհեստակցական միություններից այնպիսիները, վորոնք բաղկացած են բոլոր պրոլետարական բնույթ կրող արհեստներից, վարձու աշխատանքով ապրողները և վորոնք իրենց նպատակ են դրել ուղղակի կամ անուղղակի կեղծով պայքարելու կապիտալի դեմ:

Այսպիսով, մեր շարժումը սկզբից հենց չզնաձ կապիտալի հետ համաձայնություն դալու և աշխատակցելու ճանապարհով, այլ բնորոշ նրա դեմ կռվելու ուղին: Յեվ դա հասկանալի չէ: Ռուսաստանի արհեստակցական շարժումը ծագելով հեղափոխություն հրի և փոփոխիկի մեջ, ստեղծվելով սոցիալ-դեմոկրատիայի գաղափարական ազդեցության տակ,—անպայման դասակարգային բնույթ ստացավ և վերջին հաշվով միշտ էլ հավատարիմ մնաց ճնշվածների և ճնշվողների, աշխատանքի ու կապիտալի դասակարգային շահերի անհաշտելիության սկզբունքին: Հետագայում սուսական պրոլետարիատի այդ բնորոշ գիծը նաև նրա տնտեսական կազմակերպություններում նպատակեց այն բանին, վոր ուսուբանվոր դասակարգը իր պայքարով և հաղթանակով որինակ դարձավ իր արևմտ-յեվրոպական յեղրայրների համար:

Առաջին կոնֆերենցիայի վորոշումը կյանքի մեջ կերտվել էր կարող, չնորհիվ շարունակվող կռվի, վորը Մոսկվայի բարբիկադներում դեկտեմբերին ամենաբարձր ձևն ստացավ: Այդ պատճառով էլ համագումարի փոխարեն 1906 թ. փետրվարի վերջին Մոսկվայում դումարվեց արհեստակցական միությունների յերկրորդ կոնֆերենցիան, վորտեղ ներկայացված էին մոտ 200 հազար կազմակերպված բանվորներ: Արդեն այդ ժամանակներում հայտնի չէր, վոր ցարական կառավարությունը, վոր նոր էր սկսել կաղզուրվել ստացած ցնցումից, մտադիր էր արհեստակցական շարժումը դնել վոստիկանական որինականության նեղ մահճի մեջ: Իբր հակալիւ դրան յերկրորդ կոնֆերենցիան առա-

չադրեց արհեստակցական միությունների ինքնագլուխ կարգով կազմակերպելու լոգունգը, անկախ իշխանությունների թուլութան: Նորից վերոշում հանվեց արհեստակցական միությունների համագումար հրավիրելու համար նախապատրաստական աշխատանքներ տանելու մասին, բնորոշեց նաև կազմակերպչական բյուրո:

Ինչպես հայտնի չէ, կազմակերպչական բյուրոն իր վրա դրուված խնդիրն իրականացնել չկարողացավ շնորհիվ այն բանի, վոր վոստիկանական կոչիկը չհապաղեց ոգավելու հեղափոխական ալիքի հանդարտմամբ և սկսեց անխնայ արորել պրոլետարական ինքնագործունեություն առաջին լայն ծելերը: Արհեստակցական միությունների առաջին համագումարը հնարավորութուն ստացավ հավաքվելու միայն բանվոր դատակարգի հաղթանակի պայմաններում, պրոլետարական գիլտատուրայի միջավայրում:

Բանվորների գեկտեմբերյան պարտությունից անմիջապես հետո, մի շարք արհեստակցական միություններ, վորոնք արդեն կարողացել էին ձևակերպվել և սերտորեն կապվել բանվորական մասայի հետ, շարունակեցին իրենց գոյությունը: Բացի դրանից համախմբվելով տերրիտորիալ քաղաքային մասշտաբով, արհեստակցական միությունները նպաստեցին կործանվող միությունների պահպանվելուն և նոր արհեստակցական միությունների առաջանալուն: Բայց ցարական կառավարությունը այդ բանի հետ հաշտվել չեր կարող: Այն, ինչ վոր նա չեր կարող բաց ճակատամարտում, վորոշեց գլուխ բերել որենադրական և վարչական սահմանափակումների ճանապարհով:

Ահա այսպես հանդես յեկավ արհեստակցական շարժման լուծը՝ 1906 թ. մարտի 4-ի հռչակավոր որենքը: Դեռ վաղուց չեր, մինչև Մոսկվայի գեկտեմբերյան ապստամբությունը, միությունների մասին հրատարակված կառավարական սրիկագիծը բանվորներին իրավունք եր տալիս իրենց շահերը գործադուլային պայքարի միջոցով պաշտպանելու համար կազմակերպվել արհեստակցական միությունների մեջ: Համաձայն այդ որինագծի, միություններն իրավունք ունեին ստեղծելու գործադուլային Փոնդ, համախմբվելու տերրիտորիալ մասշտաբով: Նախագիծում եր, վոր միության փակումը կարող և տեղի ունենալ միայն դատարանի վորոշմամբ:

Բայց արդեն 1906 թ. սկզբին, զգալով, վոր բանվորներն սկսում են տանուլ տալ առանձին ճակատամարտերը, վոր

«բազդը» իր դեմքը դեպի միասնությունն և դարձրել—կառավարությունն սկսում և խուզել իր արած գիշումները: Մարտի 4-ի լիկեի մեջ գործադուլների մասին վոչ մի խոսք չկա: Մարտական գործունեության փոխարեն որենքը արհեստակցական ընկերություններին և վերապահում միայն «պարզել և համաձայնեցնել իրենց անդամների տնտեսական շահերը, բարելավել նրանց աշխատանքի պայմանները»: Վորպեսզի ընդգծել, վոր պայքարի մարտական մեթոդները միությունը գործադրել չի կարող, որենքը մատնանշում և, վոր «վարձողի և վարձվողի միջև ծագած թյուրբմացությունները պետք է լուծվեն համաձայնություն կամ միջնորդ դատարանի քննության միջոցով...» Միությունները պարտավորեցվում են գրանցվելու ընկերությունների մասին հիմնված նահանգական կամ քաղաքային ատյաններում: Միությունները կարող են փակվել ատյանի վորոշմամբ՝ կանոնադրությունը խախտելու կամ նույնիսկ վարչական իշխանությամբ, յեթե «ընկերությունը գործունեությունն սպառնում և հասարակական անվտանգությունը և հանդատությունը»:

Այս որենքի բոլոր դոհարները թվել չարժե: Առանց դրան ել պարզ և, թե ցարական վարչական իշխանության ինքնուրույն ստեղծագործություն պայմաններում, արհեստակցական շարժումն ինչ ծանր պայմանների մեջ եր դրվում: Յեւ յեթե այնուամենայնիվ 1906 և 1907 թ. թ. արհեստակցական կազմակերպությունները շարունակում են զարգանալ հակառակ բոնություններին և կամայականություններին, յեթե 1907 թ. ձեռկերպվում են մի շարք արհեստների (տաղարիչների, ջուլահանների, մետաղագործների, դերձակների և այլն) համատնտեսական միավորումները, —տաղ 1907 թ. վերջին, խոչոր լոկաուտների ալիքներից հետո, վորոնք բանվոր դատակարգի ուժը ջլատեցին, 2-րդ պետական դոման ցրելուց հետո, սկսվում և պրոֆկազմակերպությունների քայքայումը:

1907 թ. կիսին ամբողջ Ռուսաստանի արհեստակցական շարժումն, ըստ նվազեցրած հաշվի, ընդգրկում եր 652 միավորում 245,555 անդամներով: Այդ տարվա ընթացքում փակվեցին 159 արհեստակցական միություն: Վոչ մնացածները 1908 թվին իրենց շարքերում հաշվում էին ընդամենը մոտ 100,000 անդամ: Հետագա տարիները պատկերն ավելի յեն վատթարացնում, 1908 թ. վոստիկանական իշխանության վորոշմամբ փակվում են 101

միություն. 1909 թ.—96 միություն. 1910 թ. նորից—89 միություն: Բացի դրանից, այդ տարիներում 604 բանվորական միությունների մերժեցին ցուցակագրել:

Բանվորական ուրվա կրճատման, աշխատավարձի բարձրացման ասպարիզում համառ կռիվով ձեռք բերված նվաճումները մեծ չափով հետ խլվեցին կապիտալի կողմից կատարված թափուվ սկսած առաջխաղացմամբ: Ամենասե, ամենալիտի ուսակցիայի տարիները իրենց ամբողջ ծանրությամբ բնական բանվորների ուսերին մինչև 1912 թիվը, յերբ արդյունաբերության կենդանացմանը կրկին հետևեց բանվորական շարժման վերելքը և բանվոր դասակարգի գաղաքական կազմակերպությունների ուժեղացումը:

ՄԻՆՁԵՎ 1917 թիվը

Հեղափոխական շարժման անկումը.—Արձմիությունների գաղափարական գիծը.—Եկոնոմիզմ.—Լիկվիդատորություն.—Բուլճեիկները դիրքը.—Լենայի դեպքերը.—Բանվորական շարժման վերելք.—Պատերազմի ժամանակ.—Ռազմա-արդյունաբերական կոմիտեներ.—Մենչևիկները դավաճանությունը.—Վոչ թե ճառեր, այլ հեղափոխական գործ:

Գործադուլային պայքարի մասին տվյալները լրիվ կերպով տալիս են բանվոր դասակարգի հեղափոխական ուժերի արագ թուլացման պատկերը, մանավանդ 1905 թվի սկզբի մոտերը: Այսպես, 1905 թ. գործադուլներին մասնակցել են 3,000,000 բանվորներ, 1906 թ.—1,000,000, 1907 թ.—740,000, 1908 թ.—176,000, 1909 թ.—64,000, 1910 թ.—միայն 46,000, 1911 թվին նկատվում է վորոշ վերելք և գործադուլներին մասնակցողների թիվն աճում է մինչև 105,000—ի: Բանվորական շարժման անկման պատճառները բացատրվում են. արդյունաբերական ճգնաժամով, վոր տիրում էր մինչև 1910 թ., արդյունաբերողների դիմադրության ուժեղացմամբ, վորոնք կազմակերպվեցին և ստեղծեցին միասնական ճակատ բնդղեմ պրոլետարիատի, կառավարության ուսակցիան քաղաքականությամբ, վոր իր ամբողջ գործությամբ հարձակվեց բանվոր դասակարգի քաղաքական կազմակերպությունների վրա, առաջին հերթին սոցիալ-դեմոկրատական կուսակցության և հետո ել՝ արհեստակցական միությունները:

Այդ բոլոր անարարեհաջող պայմանները կարող էին խեղդել արհեստակցական շարժումը, համարյա կործանել այն, բայց բանվորական կազմակերպությունների գործունեության դասակարգային ելուժյունը, հեղափոխական բովանդակությունը դուրս մղել էին կարող:

Սև ուսակցիայի այդ չըջանում արձմիություններն աշխատանքի ինչ դիմ էին ընդունել, նրանց աշխատանքն ինչ բնույթ

եր կրում: Ապագա ճակատամարտերի համար ույթերի կուտակումն ի՞նչ զբոլակի տակ եր ընթանում, ի՞նչ լողուններով:

Այդ հարցերին պատասխանելու համար, անհրաժեշտ է համառոտակի կանգ առնել այն գաղափարական տարաձայնությունների վրա վրա, վոր գոյություն ունեյին պաշտոնապես միասնական սոցիալ-դեմոկրատական կուսակցության շարքերում, հետևապես և ամբողջ բանվորական շարժման մեջ:

Դեռ ևս քսաներորդ դարի սկզբին սոցիալ-դեմոկրատիայի մեջ առաջ է գալիս մի հոսանք, վոր կոչվել է «Եկոնոմիզմ»: Այդ հոսանքի կողմնակիցները բանվորական շարժման հիմնական խնդիրն համարում էին հանուն աշխատանքի պայմանների բարելավման մղվող տնտեսական պայքարը: Իսկ քաղաքական պայքարի հարցը, ինքնակալության դեմ կռիվում հարցը նրանք յերկրորդական էին համարում, ընդունելով, վոր դա լիբերալ բուրժուազիայի խնդիրն է հանդիսանում և վոր բանվորներն իրենք իրենց այդ հարցին կը մոտենան ապագայում տարեբայնորեն:

Այդ հոսանքի դեմ պայքարելով բյուրեղացած բոլշևիզմը, ընդունելով տնտեսական կռիվի կարևորությունն ու անհրաժեշտությունը, անհնար եր համարում բանվորներին քաղաքական կռիվից մեկուսացնելը, այդ հարցում նրանց իրենց դիտել թողնելը, վորովհետև դա կը նշանակեր բանվորական շարժումը յենթամարկել բուրժուական կուսակցությունների շահերին: Բանվոր դասակարգի կողմից արհեստակցական կազմակերպությունների ղեկավարությունը, քաղաքական և տնտեսական պայքարի համաձայնեցումը հիմք ընդունելով, — ահա պրոլետարիատի, իրրե դասակարգի, կազմակերպված հեղափոխական գործողությունների ուղին: 1903 թ. սոցիալ-դեմոկրատիայի յերկրորդ համագումարն այս դիրքը բռնեց:

Հետագայում տարաձայնություններն էլ ավելի խորացան: 1906 թ. սկսած մենչևիկները համառորեն աշխատում են այն միտքն անցկացնել, թե՛ կուսակցությունն ու միությունները հավասարազոր են, հավասար արժեք ունեն և անթույլատրելի է, վոր կուսակցությունը քաղաքականապես ղեկավարի մասսայական կազմակերպությունները, անհրաժեշտ է, վոր միությունները հարմարվեն գոյություն ունեցող ցարական լեզալ պայմաններին: Այս տեսակետը բղխում եր այն գնահատականից, վոր մենչևիկները տալիս էին հեղափոխությանը, համարելով

այն իրրե ավարտված բանվորների պարտությունը և ցանկանում էյին անցնել խաղաղ գործողությունների՝ հիմք ընդունելով պարլամենտարիզմը, համաձայնությունը բուրժուազիայի հետ, անլեզալ կուսակցության լիկվիդացիան: Այս բանի համար էլ նրանք ստացան «Լիկվիդատորներ» անունը:

Հասկանալի է, վոր հեղափոխական բոլշևիկները կատեգորիկ կերպով դեմ էին գնում դրան. նրանք ճիշտ կերպով մատնանում էին, վոր հեղափոխությունը դեռ ևս չի ավարտված, վոր մեկ ալիքի ընկնելուց հետո բարձրանում է մյուսը, վոր ցարական ռեակցիայի պայմաններում բացառապես լեզալ կազմակերպությունները լեզալ հնչյուն են, վոր միությունների դերը չի կարելի սահմանափակել լոկ նեղ տնտեսական առույտ խնդիրներով և վոր միայն լեզալ կազմակերպությունների հետ ընդհատակյա կազմակերպությունների և պայքարի հեղափոխական մեթոդների գոյությունը ընդունակ են ապահովելու բանվոր դասակարգի հաղթանակի համար ուժերի կուտակումն ու այդ ուժերի պահպանումը:

1905 թ. հեղափոխության և հետագա տարիների բոլոր դեպքերը լիովին հաստատեցին այդ փաստերի ճշտությունը, վորը վերջին հաշվով, հիմք դառավ 1912 թ. վերածնված արհեստակցական շարժման համար:

Ինչպես վերևում հիշատակեցինք, 1911 թվին բանվորական շարժման մեջ սկսվում եր թեքումն: Գործադուլային ալիքը մեծանում է: Միությունների դեմ խտություններ շարունակվում են, բայց դրա փոխարեն բանվոր դասակարգի մեջ, վոր նախկին պարտություններից արդեն կազդուրվել եր, աճում է հեղափոխադիմադրության ուժը: Պաշտպանողականությունից նա նորից անցնում է հարձակողականության, ըստ վրտում այդ շրջանում տնտեսական և քաղաքական պայքարի մեջ բաժանումը բոլորովին ջնջվում է:

Բանվոր դասակարգին ղեկի պայքարի կանչող աղբանչանն յիդան Լենայի դեպքերը, 1912 թ. ապրիլին: Բողալոյի վոսկու հանքերում անամթ շահագործման դեմ տնտեսական և իրավական պահանջներով դուրս յեկող 500-ից ավելի անպաշտպան բանվորների գնդակահարման լուրը հուղեց ամբողջ արդյունաբերական Ռուսաստանը: Շարժումն սկսվեց Պետերբուրգում բողոքի ցույցով, վորին մասնակցեցին 7000 մարդ և դեռ յերկու

տարվա ընթացքում՝ չարունակվեց զանազան արդյունաբերական շրջաններում: Այն ժամանակ, յերբ 1911 թ. գործադուլափորների թիվը հասավ միայն մինչև 105,000-ի:

1912 թ. արդեն հասավ 1,062,000-ի,
1913 թ. » » 1,184,985-ի, իսկ
1914 թ. » » 1,337,000-ի:

Այս թվերը ցույց են տալիս, թե նորից ինչպիսի ակնածելի ուժ սկսեց հասունանալ բանվորական շարքերում: Պրոլետարիատի ակտիվությունն սկսեց կենտրոնանալ վուջ առոյթա տնտեսական հարցերի շուրջը: Բանվորների յուրաքանչյուր յեկույթ, առաջացած կապիտալի ճնշումից, թե 1913 թվին ծավալված աշխատողական կամպանիայի շուրջը, համարված էր յինում նաև քաղաքական բովանդակությամբ, վորք սուր ծայրը ուղղվում էր միշտ գոյություն ունեցող կարգերի դեմ: Դրա տեսանելի ապացույցն էր մայիսի 1-ից հետո գործադուլները, վորոնց մասնակցում էին հարյուր հազարավոր բանվորներ:

Արհեստակցական միություններն այդ ժամանակ, թեև թրվական տեսակետից 1906 թ. շրջանին չէին համնում, բայց պաշտպանում էին կազմակերպչներն ամբողջ էլին: Արհեստակցական շարժման մեջ հիմնական դեր սկսեցին խաղալ գործարանային բանվորների արդյունաբերական միությունները և, առաջին հերթին, Պեակերուդի մետաղագործների միությունը: Այդ խոշոր համախմբման ղեկավարությունը գտնվում էր բուլգարիկներին, վորոնք 1913 թ. մետաղագործների յերկու հազար հոգուց բաղկացած ժողովում վարչություն ընտրելու համար անցկացրին իրենց ցուցակը: Մենչևիկները, վորոնք այդ նույն ժողովում հանդես յեկան միությունների քաղաքական գործունեությունից դեմ, բանվորների կողմից շփոթների արժանացան: Բուլգարիկների ղեկավարությունը Պեակերուդում, վորտեղ արհեստակցական շարժումն ավելի ուժեղ էր, քան Ռուսաստանի ալվալերում, աշխատում էին հացթուխների, դերձակների, վալտագործների, առևտրական ծառայողների միությունները և միությունների կենտրոնական բյուրոն: Չնայած ցարիզմի ամեն տեսակ խաղերին՝ բուլգարիկ հեղափոխական տակտիկան ավելի ու ավելի շատ կողմնակիցներ էր գրավում սլոլեկտարական հիմնական վալրերում, վորոնք և վորոշում էին շարժման բնավորությունը:

Քաղաքական և տնտեսական գործադուլներին ալիքը առանձնապես ուժեղ կերպով բարձրացավ 1911 թ. ամառվան մոտերքը: Դժվար և տակ, թե հետագայում հեղափոխական ղեկավարն ինչպես էր ծավալվելին: Բայց այդ ժամանակ ինամքով պատրաստված և սրայթած իմպերիալիստական պատերազմը բանվորական շարժումը վալր նեղեց թամբից: Ժամանակավորապես բանվորների մի մասը բռնվեց շփոթնիստական ցավով: Արհեստակցական կազմակերպությունները քար ու քանդ յեղան: Բանվոր պատակարդի լավագույն ուժերն ստիպված յեղան անցնել պաշտպանները: Դուրսը մնացին ցարական կամալախանությունն ու համարյա լեկալիզացիայի յենթարկված մենչևիկները, վորոնք բուրժուական «հատարակականություն» հետ միասին հող էլին պատրաստում «պատերազմի մինչև հալթական վախճանը»:

Գործարանում նորից թաղավորեցին հին ճորատտիրական բարքերը, վոր կերտվում էին «հայրենիքի վերկություն» բողոքի տակ: Աշխատավարձը, մանավանդ շուրճի մթերքների և առաջին անհրաժեշտությունների թանգացման, խիստ պակասեց, ինչով: Այս բանին նորոտեց նաև կանանց և յերկառների աշխատանքի և գրեց բերված, ավելի քիչ պահանջկոտ բանվորական ուժի լայն գործադուլությունը: Փաստորեն միլիտարիզացիայի յենթարկված գործարանի սահմաններում պալքարը շալիզանց դժվարացած էր: Բացի «ստորական» պատիժներից, բանվորների գլխին կախված էր ճակատ, առաջավոր դիրքերն ու զարկելու մշտական սպառնալիքը:

Բանվորն ալիսումենայիվ շխոնարհից: Հենց վոր յերկրի պաշտպանություն կարիքների համար արտադրությունն սկսեց աշխատել ամբողջ թալիով, հենց վոր գործադուլությունը նվաղեց և քիչ շատ բարձրացավ բանվորների կյանքի մակարդակը, — գործադուլային պալքարը նորից սկսեց ծավալել: 1915 թ. գործադուլ հայտարարեցին 1,086,347 մարդ, իսկ միայն 1917 թ. հունվարի ընթացքում գործադուլներին մասնակցեցին ավելի, քան 232,000 բանվոր:

Պատերազմի շրջանում մենչևիկները մի առանձին կրքոտություն հանդես էին գալիս գործադուլային «տենդի» դեմ: Յկալիս ունենալով իրենց միշտ անփոփոխ համաձայնողական գոր-

ծելակերպը, նրանք վորոշեցին ձեռք առնել ամեն միջոց, վորպեսզի քաղաքացիական խաղաղություն հաստատեն աշխատանքի և կապիտալի միջև: Այդ նպատակով նրանք կոչ ելին անում բանվորներին մասնակցելու ռազմա-արդյունաբերական կոմիտեներում, վորոնք կազմակերպված ելին արդյունաբերողների կողմից և նպատակ ունեին պլանաչափորեն անցկացնել արդյունաբերության զինվորական մորթիլիզացիան, պետական պատվերների բաշխումը և կազմակերպված կերպով ստանալու հսկայական չափ: Զինվորական ռեժիմի պայմաններում մենչևիկները բանվորներին մեջ հույս ելին տարածում, թե հնարավոր է և անհրաժեշտ աշխատակցել բուրժուազիայի հետ: Բայց պրոլետարիատն այս անգամ չսխալվեց:

Ռազմա-արդյունաբերական կոմիտեներ կազմակերպելու նախընտրական կամպանիան անցավ մեծ կենդանությամբ, բուլչեիկներին և լիկվիդատորներին պայքարն իր վրա գրավեց բանվոր դասակարգի ամբողջ ակտիվի սեչադրությունը: Հետևանքն այն յեղավ, վոր ռազմա-արդյունաբերական կոմիտեների համար բանվորներից ներկայացուցիչներ ընտրող լիազորների ժողովում (1915 թ. սեպտեմբերի 27) ձայների մեծամասնությամբ ընդունվեց բուլչեիկների առաջարկած բանաձևը: Այդ բանաձևում ստվում էր, վոր «հայրենիքի պաշտպանության» լուրջագույն և մենչևիկները քողարկում են դործարանատերերի գիշատիչությունը, վոր պատերազմը առաջ և յեկել մի իւմբ հզոր արդյունաբերողների կողմից շուկաներ խլելու ցանկությամբ և վոր հեղափոխական բանվորների խնդիրն իմպերիալիստների ակտիվների պաշտպանությունը չէ, այլ նրանք ամեն մի ելրկրում կապիտալի ճնշման դեմ քաղաքական և տնտեսական պայքար պիտի մղեն, վորպեսզի պրոլետարիատը զբաղվի իշխանությունը:

Այդ հիմունքներով բանվոր-լիազորները կատեգորիկ կերպով հրաժարվեցին մասնակցելու այն բոլոր կազմակերպություններում, վորոնք վորեկ կերպ կը նպաստեն պատերազմին:

Մենչևիկներն, իհարկե, չհանդատացան: Ի սպաս բուրժուազիայի կատարելով միջնորդի դեր, նրանք, ստիթ բռնելով, թե առաջին ընտրությունները սխալ են յեղել, հրավիրեցին լիազորներին յերկրորդ ժողով: Այդ ժամանակ արդեն դործարանների հեղափոխական ներկայացուցիչները «վերացված» ելին, դրված

ելին բանտ: Կատարվեց կեղծիքը, սկսվեց մենչևիկական առաջնորդների գաղաճանական աշխատանքը, վոր արտահայտվում էր ճեճոտն Ֆրադներով «ազատության», «յերկրի բուրժուական-դեմոկրատական տարրերի» հետ միասին «ռեժիմի դեմոկրատացման» մասին:

Բայց այդ պրոնկախությունը բանվորների իսկքին չատրիչ բան էր ստում: Խոսքը հին, կեղտոտ, նեղ բաճկոնի կարկասանների, վոչ մի նշանակություն չունեցող դործարանային ավազների մասին յեղած որենքի մասին չէր, վոր 1916 թ. նորից հարություն ավին: Խոսքը ել ավելի մեծ բանի մասին էր. ինքնուկալության դեմ ամենիջական կռիվ, պրոլետարիատի դասակարգային կազմակերպությունների ազատության համար կռիվ մղելու, հանուն իշխանության պայքարելու մասին էր:

Պատմության այս նոր յերեսը բացվեց 1917 թ. փետրվարյան ուրերին:

ՊԱՅՔԱՐ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Գործարանային կոմիտեների ծաղումը.—Արհեստակցական միությունների աճումը.—Գործարկումի իրավունքների համար.—Ձեռնարկունների սարքառվելը.—Բանվորական վերահսկողություն.—Գործարանային կոմիտեներից իրավունքներ.—Արհեստակցական միությունների համառոտական Յուրդ կոմիտեներից իրավունքներ.—Համաձայնողականության մոտոպ.—Միությունները պատրաստվում են կուլի.—Մեծ հեղափոխությունը:

Յերկուս ու կես տարի չարունակ, գինվորական բանակատեղի պայմաններում Ռուսաստանի բանվոր դասակարգն ուժ էր կուտակում: 1917 թվի փետրվարյան օրերին, ուժեղ թափով նետեց ու կործանեց նա ամբողջովին փռած ցարական դաճը: Յեվ հաղթող բանվորների առաջին պարտականությունը, առաջին հոգսը յեղավ իր կազմակերպությունների ստեղծումը:

Գործարաններում և զավույներում կազմակերպվեցին գործարանային կոմիտեներ, վորոնք բառ ելույթյան հանդիսանում են իրեն պրոլետարիատի տեղական քաղաքական-տնտեսական կազմակերպություններ: Նրանց հետ միասին սկսեցին կենդանություն ցույց տալ և նորից ստեղծվել արհեստակցական միություններ: 1917 թվի փետրվարյան հեղափոխությունը ուստական արհեստակցական շարժումը հասավ ընդամենը 24 միություններով, վորոնք ընդգրկում էին չափաքանց սահմանափակ թիվով անդամներ: Բայց արդեն հունիսին, միություններում կազմակերպված բանվորների թիվը հասավ մինչև մեկ ու կես միլիոն մարդու:

Չնայած այն հանգամանքին, վոր արհեստակցական կազմակերպությունները նոր-նոր ելին կազմվել և դեռ ևս չէին կարողացել ամբողջովին կապվել բանվորների հետ, այնուամենայնիվ, չնորհիվ իրենց անդամների հեղափոխականության, մեծ ուժ էին ներկայացնում, վորը բավականին հաջողությամբ

կուլի յեր մտել կապիտալի դեմ. վերջինս արդեն վորքի յեր կանգնել և համառորեն պաշտպանում էր իր զիրքերը: Արդյունաբերողներն, արտաքուստ հաշտվելով բանվոր դասակարգի քաղաքական նվաճումների հետ, հաշտվել չէին կարող վոչ ծածայա բանվորական օրվա հետ, վոչ էլ, գլխավորապես, արդյունաբերության ընթացքի մեջ բանվորների խառնվելու հետ:

Գործարանային կոմիտեների միջոցով բանվորներին վարձելու և արձակելու և գործարանների ու զավույների վրա հսկողություն ունենալու հարցերն էլին, վորոնց չուրջը ծավալվեց մի կատաղի պայքար:

Ռուսաստանի պրոլետարիատը, վոր իր ուսերի վրա տարավ փետրվարյան օրերի հեղափոխական պայքարը, չէր կարող հաշտվել, թե ինքը գործարանում իրավազուրկ է լինելու: Այդ պատճառով էլ հեղափոխության հրի մեջ ծնված, գործարանային կոմիտեները դուրս յեկան այն շրջանակներից, վորոնց մեջ փորձում էր պարփակել նրանց ժամանակավոր կառավարությունը ապրիլի օրերը: Բանվորներ վարձելու և արձակելու հարցը, վոր այդ ժամանակ լուծվում էին բացառապես գործարանային ազմինիստրացիայի իշխանությամբ, գործարանային կոմիտեների ուշադրության կենտրոնն անցան:

Թե վորքան այդ ֆունկցիաներում բանվորների խառնվելը հարվածում էր ձեռնարկողների շահերին, յերեւում և այն խիստ արամադրությունից, վոր արդյունաբերողները հակադրեցին ձեռնարկություններում բանվորական կազմակերպություններին «խլելու» պրակտիկային: Այդ պայքարի մեջ կապիտալը կանգ չէր առնում վոչ մի միջոցի առաջ: Ամենից առաջ նա աշխատեց գինվորների մասսաներին և դյուղը թշնամացնել բանվորների հետ, վորոնք իրր թե իրենց չափաքանց մեծ պահանջներով և աշխատանքի ցածր արտադրողականությամբ քայաքայում են արտադրությունը: Բայց յերբ վոր ճակատից յեկած պատգամավորությունները մերկացրին այդ սուտը, և հեղափոխական ճակատը ձեղքելու փորձը գլուխ չէկավ, բուրժուազիան վորոչեց բանվորներին հաղթել քաղցածությամբ, «սովի վոսկրոտ ձեռքով» խեղդել բանվորական շարժումը: Սկսվեց ձեռնարկողների սարքառվել, վոր արտահայտվում էր պատվերները չկատարելով, հում նյութը, վառելիքը դուրս տանելով, կահավորությունը փչացնելով, արտադրության անչահավետության պատրվակով ձեռնարկությունները փակելով: Այն տեղերում,

վորտեղ արդյունաբերական կապիտալն իրա անունից սարսափա-
նակն անհամար եր դնում, հանդես ելին գալիս բանկերը և
մերժում հարկավոր վարկեր բաց թողնել: Այդպիսի պայման-
ներում, բանվոր դասակարգի առաջ ծագեց մի խնդիր, այն է՝
ինչ կերպ ել լինի, արդյունաբերությունը պահպանել: Հերթի
յնը դրվում բանվորական վերահսկողություն լողունքը:

Արհեստակցական կազմակերպություններն ինչպես ելին վե-
րաբերվում այդ լողունքին:

Դեռ ևս գործարանային կոմիտեների առաջին կոնֆերենցիա-
յին, Պետրոգրադում 1917 թ. մայիսին, այդ հարցը ուշադրու-
թյան կենտրոնն եր կազմում: Մենչևիկներն ու ես-կերները, վո-
րոնք բուրժուազիայի հետ միասին ժամանակավոր կառավարու-
թյան իշխանություն մեջ մաս ունեյին, հեղափոխության խնդ-
րին այն ելին համարում, վոր Ռուսաստանում կապիտալիզմի
համար պետք և ազատ զարգացման ասպարեզ բանալ, իսկ բան-
վորները միայն ոգտագործելու յեն ստեղծված պայմաններն իրենց
նյութական և իրավական պահանջը բարելավելու համար այն
սահմաններում, վոր թույլ և տալիս բուրժուական-սպարամենտա-
կան որինականությունը: Այս նախադրյալներն յեղակետ ունենա-
լով, նրանք կոնֆերենցիային առաջարկեցին հսկողության ֆունկ-
ցիաները կենտրոնացնել պետություն ձեռքը: Իրենց առաջարկու-
թյունը յուղեցին ասելով, թե տնտեսական կյանքը կարգավորող
մարմիններում իրենք կապահովեն «դեմոկրատիայի ներկայացու-
ցիչները» գերակշռությունը, վոր յեթե պարզ լեզվով ասենք, կը
նշանակե, վոր յերկրի կյանքը հանձնվում և բուրժուազիայի,
գործարանային ձեռնարկողական միավորումների, դեմսովոյական
և քաղաքային ինքնավարությունների ձեռքը և այլն:

Բայց գիտակից բանվորները հասկացան, վոր հսկողությունը,
վոր հանդիսանալու յեր իբրեւ անցողիկ մի աստիճան արտադրու-
թյունը գրավելու համար, չի կարելի վստահել կապիտալիստա-
կան կառավարությունը և եսերո-մենչևիկական դեմոկրատիային:
Այդ պատճառով ել կոնֆերենցիան վորոշեց, թե՝ «կատասորո-
ֆայից փրկելու միակ ճանապարհն իսկական բանվորական հսկո-
ղություն սահմանելն է»:

Հսկողության հարցը քննվեց նաև արհեստակցական միու-
թյունների Համառուսական Զ-րդ կոնֆերենցիայում, 1917 թ.
հունիսին: Շնորհիվ այն հանդամանքի, վոր բանվորական լայն

մասսաները հեղափոխության հենց առաջին որերից թափվեցին
արհեստակցական միությունների մեջ, և վոր սկզբնական շրջա-
նում նրանց համար դժվար եր հասկանալ և ըմբռնել տեղի ունեցող
բնույթը, — այդ կոնֆերենցիայում մենչևիկները վորոշ գերակշ-
ռություն ստացան (15—20 ձայնով) բուլշևիկների և նրանց հա-
մակրողների նկատմամբ: Այդ պատճառով ել հիմնական հարցերի
նկատմամբ կոնֆերենցիայի հանած վորոշումները բավականին
համակված ելին համաձայնականությունը: Բուլշևիկներն առաջար-
կեցին քննել «արհեստակցական շարժումը նեղացնելու և պատե-
րադի ու տիրող դասակարգերի շահերին յենթարկելու փորձերը»,
միությունների և իր յերկրի բուրժուազիայի աշխատակցության
զաղափարի վոճրականությունը: Սակայն կոնֆերենցիան մերժեց
այդ և անցնելով յերկրի տնտեսական դրություն գնահատմանը,
չառ ճոճաւն ֆրագներ ստաց գները նորմաների յենթարկելու,
ունեւոր դասակարգերի վրա հարկեր դնելու, արդյունաբերու-
թյունը պետական ստիպողական կարգով սինդիկացիայի և տրես-
տացման յենթարկելու, արտադրության և բանկերի վրա հսկո-
ղություն սահմանելու մասին, բայց և միաժամանակ մատնա-
նչեց և ընդգծեց, վոր տնտեսական կյանքի կարգավորման խնդիրը
չափազանց բարդ և ու դժվար և այդ պատճառով նախադրուչա-
ցրեց պրոլետարիատին, թե նա չպետք և բացառապես իր ուսերի
վրա վերցնի յերկրի տնտեսական քայքայվածությունը գեմ տարվող
կովի ընթացքի և հետեանքի պատասխանատվությունը, վոր իր
ուսերից վեր և: Այս վորոշումից ինքնաբերաբար բխում և մի
յեզրակացություն՝ անհրաժեշտ և փնտրել կոնտակտ, համաձայ-
նեցրած գործողություններ բուրժուազիայի հետ:

Թե վորքան մենչևիկներն այդ վորոշումով արտացոլում, ար-
տահայտում ելին կազմակերպված բանվորների կածիքը, յերե-
վում և նրանից, վոր կյանքը անցավ նման փրկիչ դեղատոմսերի
մոտով, թողնելով անուշադիր այդ բոլոր դեղատոմսերը: Ձեռ-
նարկուների լուհուտներն ու սարսափը բանվորներին ստիպեց
բռնել ակալիվ գործողությունների ուղին: Ձեռնարկողների կող-
մից գործարանների և գավոդների կայքը թալանելուց պաշտպա-
նելու համար պահակություն կազմակերպելուց սկսելով, բանվոր-
ները հանգամանքներից ստիպված կանգ առան ձեռնարկույուն-
ների ներքին կյանքին խառնվելու անհրաժեշտության առաջ: Հում

նյութի, վառելիքի, տեխնիքական կահավորման, ֆինանսավորման հարցերը ընկնում են բանվորական հսկողութային շրջանակի մեջ, վոր նոր եր սկսվել կյանքի մեջ կիրառվել:

Այն կատաղի դիմադրությունը, վորով արդյունաբերողները դիմավորեցին պրոլետարիատի ակտիվ քաղաքականությունը, առաջ եր բերում կատաղի պայքար: Իրենց ճնշող մեծամասնությամբ արհեստակցական միություններն սկսեցին գեպի ձախ թեքվել: Հակահեղափոխության և կեղծ սոցիալիստական կուսակցությունների ներկայացուցիչների յեղբայրացման ժամանակ, 1917 թ. ոգոստոսին պետական խորհրդակցության ժամանակ, Մոսկվայում 500,000 բանվոր, արհեստակցական միությունների Մոսկվայի բյուրոյի նախաձեռնությամբ, հայտարարեցին մեկ որյա բողոք-դործադուլ «ամբողջ իշխանությունը խորհուրդային» լուղունդով: Նման բողոք հայտնեցին նաև 140,000 ուրալցի բանվորներ:

Յերբ գեներալ Կորնիլովը դուրս յեկավ հեղափոխության ոչխախ, Պետրոգրադի բանվորների դեմ, արհեստակցական միությունները պահանջեցին քանդել կոալիցիան, իշխանությունը հանձնել խորհուրդներին: Պետրոգրադի միությունների խորհուրդը պահանջեց ստեղծել մայրաքաղաքը հակահեղափոխությունից պաշտպանելու համար պաշտպանության կոմիտե:

Ջուլհակների համառուսական կոնֆերենցիան հայտարարեց, «վոր միայն խորհրդային իշխանությունը կարող և փրկել յերկիրը տնտեսական և քաղաքական փլուզումից և բարեկամել բանվոր դասակարգի դրությունը»:

Մոսկվայի շրջանի մետաղադործների կոնֆերենցիան, վոր տեղի ունեցավ հոկտեմբերի սկզբին, 138 հազար բանվորների առնունից պահանջեց արմատապես փոխել տնտեսական քաղաքականությունը, ազգայնացման յենթարկել խոշոր ձեռնարկությունները, տրանսպորտը, բանկերը:

Մետաղադործների Մոսկվայի միությունը արտահայտվեց այն մտքով, թե մասնակի մանր ճակատամարտերի համար չպետք և ուժերը ցրել, վորովհետև մեր առաջ կա «մի հակայական կոնֆլիկտ աշխատանքի և կապիտալի միջև»:

Այս բոլոր վորոշումները լուկ խոսքեր չէին: Նրանց դուրսբերած կատարվում եր ուժերի խոր մոբիլիզացիա, կենտրոնանում էին պահեստները վճռական մարտի համար: Գործարանների,

հողի և խաղաղության համար մղվող պայքարում իրենց ուժերը համախմբեցին բանվորները, բանակը, չքավոր դյուղացիությունը: Վրա հասավ 1917 թ. հոկտեմբերյան որերը: Առաջին անգամ էր, վոր բանվոր դասակարգը լրիվ հաղթանակ տարավ:

ՌԱԶՄԱԿԱՆ ԿՈՄՈՒՆԻՉՄԻ ՇՐՋԱՆ

Հոկտեմբերից հետո, հետեյալ ուրը.—Աստիճանավորության սարսուռը.—Մենչեիկների քաղաքականությունը և «հեղոքության» ու «անկախության» լողունները.—Միությունների նոր խնդիրները.—Դեկրետ բանվորական հսկողության (կոնտրոլի) մասին.—Արդյունաբերության ազդեցության մասին.—Արտադրության կառավարելը բանվորների կողմից.—Արհեստակցական միությունները և աշխատանքի կազմակերպությունը.—Միությունների աճումը.—Գործարկողների ձուլումը արհեստակցական միությունների հետ.—Միջմիութենական մարմինների աճումն ու ամրացումը.—Դեպի միասնական միություն:

Հոկտեմբերյան հեղաշրջումը կատարվեց սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության բուլչեիկների ղեկավարությամբ, բանվորների և նրանց գործարանային կոմիտեների ու արհեստակցական միությունների ձեռքով: Հաղթության հենց հետեյալ ուրը պրոլետարիատի տնտեսական միավորումների այդ շտաբները գործադուլավոր բանվորներին կոչեցին արտադրողական աշխատանքի, վորովհետև հաստատված պրոլետարական դիկտատուրայի պայմաններում վոչ մի հիմք չկար գործադուլային պայքարը կիրառելու: Այսուհետև վարձողների հետ ծագած բոլոր կոնֆլիկտները, թե աշխատանքի պայմանների ասպարիզում, և թե արտադրության կարգավորման ասպարիզում, լուծվում էին պետական ստիպողությամբ, արհեստակցական միությունների և պրոլետարական պետության կողմից բանվորների շահերը պաշտպանելու ճանապարհով: Զուլահակների գործադուլը, կաշեգործների յերկարատև գործադուլը և այլն դադարեցին: Յուրաքանչյուր բանվոր հասկանում էր, վոր ձեռնարկության աշխատանքի կանգ առնելը թուլացնում է պրոլետարիատի ուժը, վորը հաղթության հենց առաջին օրից ստիպված էր իր բոլոր ուժերը մոբիլիզացիայի յենթարկել՝ հեղափոխությունը պաշտպանելու համար:

Չդադարող պայքարի լարված միջավայրում միություններն ու խորհուրդները, կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ, ձեռք դարկեցին կարմիր զվարդիայի, սանիտարական խմբերի կազմակերպման: Դրա հետ միաժամանակ քանդվում էին հին կալվածատիրական-բուրժուական կարգի մնացորդները, կառուցվում էին իշխանության և տնտեսավարական կառավարչության նոր մարմիններ:

Դժբախտաբար պրոֆկազմակերպությունների ընտանիքը արտոններից զերծ չէր: Մինիստրությունների, բանկերի, պարենավորման մարմինների ծառայողները, վորոնք ոտարացել էին բանվոր դասակարգից, քայքայվել մանր-բուրժուական ազդեցությունից, հրաժարվեցին աշխատանքից, «սարսուռի» յենթարկեցին պրոլետարական իշխանությունը: Նրանց հետ էին նաև ասպարակական զործի բանվորները, վորոնք շնորհիվ իրենց աշխատանքի տեսակի, մանր-բուրժուական մամուլի միջոցով ավելի էին յենթարկվում այդ մամուլի իդիոլոգիական քայքայիչ ազդեցությանը: Տպագրիչները հրաժարվեցին հեղափոխական լրագրեր և դրականություն տպագրելուց, պահանջելով բանվոր դասակարգի չնամինների, բուրժուազիայի և նրա մենչեիկական-եւրոպական ձայնակիցների համար մամուլի ադատություն:

Բայց շնորհիվ արդյունաբերական, գործարանական բանվորների յեռանդի, շնորհիվ ստորին ծառայողների համակրության և բարձր ծառայողների զեմ մղած պայքարի, բարձր աստիճանավորության աշխարհ սարսուռը շուտով կտրվեց, իսկ արհեստակցական շարժման վերահիշյալ բանակները 2—3 տարի անցնելուց հետո, յերբ համոզվեցին, վոր Խորհրդային իշխանությունը և, հեղափոխականորեն հետևողական և և կայուն, յերբ համոզվեցին, վոր ուսական արհեստակցական շարժման բռնածղիծը ճիշտ է,—դուրս յեկան մենչեիկյան գերությունից և Ռուսաստանի ամբողջ դասակարգի հետ միասին սկսեցին վոտր-վոտրի լնթանալ:

Ռուսական արհեստակցական շարժման զիծը, վոր զեռ ևս յերրորդ կոնֆերենցիայումն էր սահմանված, անհետաձգելիորեն վերաքննություն էր պահանջում: Այդ վերաքննությունը կատարեց ինքը կյանքը և ձևակերպվեց արհեստակցական միությունների 1—ին համագումարում, 1918 թ. հունվարին: Յեւակեռ բնդունելով այն, վոր Ռուսաստանում տարած հաղթանակը «մեկ

միաժամանակ մոտեցնում ե միջազգային սոցիալիստական հեղափոխութեան սկզբին և արտադրութեան կապիտալիստական յեղանակը հաղթահարելուն», առաջին համազումարը դեմ արտահայտվեց մենչևիկների առաջադրած բուրժուական դադափարին՝ արհեստակցական միությունների չեզոքացման մասին:

«Չեզոքութեանը» նշանակելու յեր անտարրեր վերաբերմունք դեպի քաղաքական պայքարը, դեպի քաղաքական իշխանութեան մարմինները: Բայց վո՛չ կապիտալիստական իրավակարգի պայմաններում, վո՛չ ել պրոլետարական դիկտատուրայի միջավայրում բանվոր դասակարգն ու նրա արհեստակցական շարժումը, պարզ ե, վոր չեզոք մնալ չեն կարող: «Հեղափոխական սոցիալիզմի և նրա հակառակորդների մեծ պատմական դարի մեջ» չեզոք մնալ անկարելի յե: Արհեստակցական միությունների դործունեությունը չի կարելի սահմանափակել կապիտալիստական իրավակարգի շրջանակում բացառապես աշխատանքի լավագույն պայմանների համար մղվող պայքարով: Արհեստակցական միությունները, բանվոր դասակարգի մյուս մարտական կազմակերպությունների հետ միասին, կոչված են կռիվելու հանուն պրոլետարիատի դիկտատուրայի և սոցիալիզմի իրականացման:

«Չեզոքութեանը» լողունը միմիայն բառական կեղե եր, վորի հետևում մենչևիկները միշտ ել անց ելին կացնում բուրժուազիային ցույց տված իրենց ոժանդակութունը, իրենց դավաճանությունը բանվոր դասակարգի շահերի նկատմամբ: Բնորոշ ե այն, վոր կապիտալի հետ համաձայնողական քաղաքականություն վարող մենչևիկները, վորոնք ոգնում ելին բուրժուական ժամանակավոր կառավարութեանը 1917 թ. փետրվարյան հեղափոխութեան շրջանում, բանվորների կողմից իշխանությունը խլելուց անմիջապես հետո մերկացրին իրենց «չեզոքությունը», դադարեցրին խոսակցությունը քաղաքական պայքարի նկատմամբ անտարբերութեան մասին և իրենց «անկախությունը» արտահայտեցին նրանով, վոր կոչ արին բանվորներին խորհուրդներին դեմ կռիվելու համար: Այդ պայքարի համար նրանք վոչ մի միջոցից չեյին խորջում:

1918 թ. դարնանը ու աշնանը քաղաքացիական սուր պատերազմի և նրա հետ կապված զրկանքների, սովի, ցրտի ժամանակ մենչևիկները Պետրոգրադում, Մոսկվայում և այլ վայրերում հորձում ելին, բացի դոյություն ունեցող արհմիությունական

կազմակերպություններից, իրենց շուրջը համախմբել անբավական տարրերին, բորբոքելով նրանց անձնական կաշվին վերաբերող շահերը: Կիսադիտակից բանվորների այդ խմբակից նրանք առաջ ելին քաջում լիազորներ, ստեղծում ելին լիազորների խորհուրդ, փորձելով հակադրել նրանց դործարանային կոմիտեներին: Այդ դասի «ույթերի մոբիլիզացիան կատարվում եր դեպի միությունների հին խնդիրները վերադառնալու լողունով, կամ, ավելի պարզն ասած՝ խորհրդային իշխանութեան, բանվորական հեղափոխութեան, բանկերի ազգայնացման դեմ կռիվելու լողունով, վորովհետեւ ըստ մենչևիկների հայտարարութեան այդ միջոցները «նպաստում են արեւոյնարեութեան կործանմանը և քանդում են հենց բանվորների դոյութեան հիմքը»: Զրկանքներից ազատելու յեղը նրանք տեսնում ելին վոչ թե բանվորների հաղթանակը ամբապնդելու մեջ, այլ դործարանատերերի, բանկիրների և կապալածատերերի վերադարձի մեջ:

Թե վորքան աննշան եր համաձայնականների հաջողությունը իրենց այդ վոճրագործ աշխատանքում, յերևում ե նրանից, վոր 1918 թ. ամառը Պետրոգրադում և Մոսկվայում տեղի ունեցող դործարանային կոմիտեների լայն կոնֆերենցիաները ամոթով կնքեցին մենչևիկների քայքայիչ դործողությունները: Բայց այդ դործունեությունը, վոր սոցիալ-համաձայնողական ցույց ելին տալիս մանավանդ պրոլետարական հեղափոխութեան առաջին տարիներում, ցույց ե տալիս, թե փաստորեն ինչ եր թագնված և թագվում եր արհեստակցական միությունների «չեզոքություն և անկախություն» լողունի տակ: Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո մենչևիկների առաջադրած արհաբժման «անկախութեան» լողունի հիմնական իմաստը պրոլետարական դիկտատուրայի միջավայրում այն եր, վոր միությունները կտրվեյին հեղափոխությունից, վարելին անկախ քաղաքականություն, տարրեր և հակառակ այն քաղաքականութեան, վոր վարում ե հեղափոխական կոմունիստական կուսակցությունը և բանվորական իշխանությունը:

Արհեստակցական միությունների առաջին համազումարը 1918 թ. հունվարին կտրականապես մերժեց մենչևիկների բռնած դիրքը և արտահայտվեց հոգուտ բանվորական պատգամավորներին խորհուրդների և արհմիությունների սերտ աշխատակցութեան և անքակտելի որդանական կապի և շնչոց, վոր «արհեստակցա-

կան միությունների աշխատանքի ծանրության կենտրոնը կազմելու յե կազմակերպչական-տնտեսավարական ասպարեզը: Արհեստակցական միություններն իրենց վրա յեն վերցնելու արտադրությունը կազմակերպելու և յերկրի քայքայված ուժերը վերականգնելու գլխավոր աշխատանքը»:

Արհեստակցական միությունների այդ պատասխատնու աշխատանքն ի՞նչ ուղիներով կարող եր և պետք եր ծավալվեր:

Առաջվա պես հիմնական ուղին ըկած եր բանվորական հսկողության կիրառման և ուժեղացման մեջ, վորին անհրաժեշտ եր տալ ալելի մեծ կազմակերպվածություն և պլանաչափություն: Բանվորական հսկողությունը, վոր կիրառվում եր 1917 թ., ցըրված եր առանձին առանձին ձեռնարկությունների շրջանակներում, հենց այդ պատճառով ել հնարավոր չեր դարձնում նորմալ կերպով, ճիշտ գծած պլանով կիրառելու արդյունաբերության վերականգնման գործը, բաժան-բաժան եր անում տնտեսությունը, այլասեղծում և դառնում եր տեղապաշտություն (Местничество), վերահսկիչ հանձնաժողովները և գործարանային կոմիտեները պաշտպանում եյին իրենց ձեռնարկության շահերը, առանց հաշիվ անելու ընդհանուր պետական շահերը: Այդ պատճառով 1917 թ. նոյեմբերի 27-ի գեկրետով ստեղծվեց Բանվորական հսկողության համառոտական խորհուրդը, վորը միացրեց և կարգավորեց հսկողության գործը խորհուրդների ամբողջ հանրապետության մեջ:

Բանվորական հսկողության կիրառումը դեռ ևս չեր նշանակում մասնավոր սեփականության վերացում: Ձեռնարկողները դեռ ևս մնում եյին իրենց տեղերում, թեև, ճիշտ և, սեղմված հսկողության ճիրաններում: Գործարանատերերը, բնական և, հակառակում, դիմադրում եյին իրենց իրավունքները խուզելու դեմ, փակելով ձեռնարկությունը կամ թողնելով բախտի կամքին: Ծարտարապետները (пичажеры) բոլորտ հայտարարեցին բանվորական հսկողության մարմիններին: Այսպիսով արտադրությունը պահպանելու հոգսը ստիպեց ազգայնացնել մի ձեռնարկություն մյուսի հետեից: Ազգայնացումն ընթացավ քառասյին ձևով, ձեռնարկությունները կառավարելու համար կարիք եր զգացվում այնպիսի մարմինների կազմվելուն, վորոնք կարգավորեյին արտադրությունը: Այսպիսով առաջ յեկան Ժողովրդական տնտեսության խորհուրդները, վորոնք կազմվել եյին արհեստակ-

ցական միությունների և խորհրդային իշխանության կողմից: Բնականաբար անհրաժեշտություն ստեղծվեց հրատարակելու դեկրետ ամբողջ արդյունաբերությունը և առետուրը ազգայնացնելու մասին, նպատակ ունենալով կենտրոնացնել պրոլետարական պետության ձեռքում արտադրության բոլոր աղքատիկ միջոցները, պահպանել արդյունաբերությունը, ապահովել բանակի և բանվոր ազգարնակության մատակարարման գործը և զրկել բուրժուազիային խորհրդային իշխանության դեմ կռիվելու համար տրնտեսական հողից:

Միությունների դերի ուժեղացումը, նրանց կազմակերպչական-տնտեսավարական գործունեյության դարգացումը բնականաբար անհրաժեշտ դարձրեց, վոր արտադրական Փոնկցիաները գործարանային կոմիտեներից անցնեն միություններին: Ծնորհիվ այս հանգամանքի գործարանային կոմիտեների անկախ գոյությունը դառնում եր ալելորդ: Գործարանային կոմիտեների կենտրոնական Խորհուրդը իր գործունեյությունը դադարեցրեց, բաժարել յենթարկեց, իսկ գործարանային կոմիտեներն իրենք ձեռնարկության մեջ դարձան արհեստակցական միությունների ստորին մարմինները:

Արդյունաբերության ազգայնացումից և պրոլետարական պետության ձեռքն անցնելուց հետո, միությունների և խորհուրդների առաջ կանգնեց հետագա խնդիրը՝ բանվորական հսկողություն կազմակերպելուց անցնել արտադրության բանվորական վարչության նոր տնտեսավարական մարմինների ցանց ստեղծելուն:

Այդպես ուրեմն, Ռուսաստանի բանվոր դասակարգը, վոր մերժեց «անկախությունն» ու «չեզոքությունը», ճիշտ կերպով մոտեցավ բանվորական հսկողության միջոցով արտադրությունը դրավելու խնդրին: Բանվորական հսկողությունը խաղաց իր հրակայական դրամական դերը, վոր նրանից խլել չի կարելի, և 1919 թ., յերբ արտադրության բանվորական կառավարչության մարմինները վերջնականապես կազմվեցին և բավականաչափ ամրացան, այլևս յերկու դուզահեռ կազմակերպությունների գոյության կարիքն անցավ, վորովհետև այդ հանդամանքը ձեռնարկության մեջ առաջ եր բերում յերկիշխանություն: Ծնորհիվ այդ հանգամանքի, արհեստակցական միությունների 2-րդ համագումարը մասսայական բանվորական հսկողությանը հատկացրեց հետագա վերստուգման և հսկողության Փոնկցիաներ, իսկ 3-րդ և 4-րդ

համագումարները ուժեղացրին միությունների դերը բարձրագույն կարգավորող և ծրագրող տնտեսավարական մարմիններում, թողնելով գործարանային կոմիտեներին հետևելու, վոր ձեռնարկություններում գործը կանոնավոր ուղղորդող տնտեսավարականորեն տարվի, հետևի արտադրական ծրագրերի կատարվելուն, նույնպես և կապ պահպանի բանվորա-գյուղացիական տեսչության հետ, վորի վրա յե զրված վերստուգման-հսկողության ֆունկցիաները:

Արտադրության բանվորական վարչության մարմիններն ստեղծելուց հետո արհեստակցական միությունների հիմնական խնդիրն էր հանդիսանում աշխատանքի կանոնավոր կազմակերպման հոգսը: Աշխատանքի արտադրողականության ընկնելու պատճառով գործի այս կողմի վրա անհրաժեշտ էր հատուկ ուշադրություն դարձնել. դա առաջացել էր նրանից, վոր գործարանային պրոլետարիատի հիմնական կազմը ցրվել էր յեկել, լավագույն վորակյալ բանվորական ուժը գորակոչման էր յենթարկվել ճակատի համար, բանվորների մի մասը գյուղ էր գնացել, վորտեղ սովն աչխան էլ սուր կերպով չէր զգացվում, գործարանների կահավորումը մաշվել էր և աշխատանքն էլ ցածր էր վարձատրվում:

Աշխատանքի կազմակերպման մեթոդները, վոր արհեստակցական միություններն էյին գործադրում, կայանում էյին աշխատանքի վարձատրության քաջալերական սխտեմների մեջ (գործարքային սխտեմը, հաստատված 2-րդ համագումարի կողմից, աշխատանքի արդյունքների համար մրցանակ, պրեմիա տալը), մշակման նորմեր սահմանելու, աշխատանքը տարիֆիկացիայի և վորակավորման յենթարկելու, պետության համար առանձնապես կարևոր ձեռնարկությունների համար այն ժամանակվա նկատմամբ աշխատավարձի ամենաեյակական տեսակով, — նատուրալ ֆոնդերով (լայն գործածության համար մթերքներով և առարկաներով), — ապահովելու հոգսերի մեջ: Դրա հետ միասին արհեստակցական միությունները կատարում էյին բանվորական ուժի հաշվառման և բաշխման աշխատանքը, անհրաժեշտ դեպքերում պետական մարմինների հետ միասին դիմելով ստիպողական միջոցների (աշխատանքային պարտավորություն (պարհակ), աշխատանքային մորիլիդացիա), համոզման և ստիպողական միջոցներով ամրացնում էյին աշխատանքային դիսցիպլինան (ընկերական, դիսցիպլինար դատարաններ), միջոցներ էյին ձեռք առնում պրոֆ-

տեխինքական կրթության միջոցով բարձրացնելու բանվորների վորակը, միաժամանակ ներշնչելով նրանց բանվոր դասակարգի ձիշտ վերաբերմունքի գիտակցություն դեպի արտադրությունը, իրեն նույն դասակարգի սեփական ստացվածքի:

Այսպիսով բացառապես կենտրոնացնելով իրենց ձեռքում աշխատանքի կազմակերպման և նրա վարձատրման գործը, բանվորին մատակարարելու բանվորական ուժի նախապատրաստման գործը աբհեստակցական միություններին և գործարանային կոմիտեները, չնայած բոլոր ձեռք առնված միջոցներին սահմանափակելու նրանց իրավասությունը տնտեսավարական մարմինների և գործարանային վարչության ֆունկցիաներում, այնուամենայնիվ վատտորեն խտոնվում էյին ձեռնարկությունների վարչական-տնտեսավարական կառավարչության մեջ և ազդում էյին արտադրության ընթացքի վրա: Չնայած մի շարք դրական մոմենտներին, այդ հանգամանքը արտադրության և ժողովրդական տնտեսության քայքայումից պահպանելու և նրանց ամրացմանն ու դարգացմանը նպաստելու պատասխանատու գործում մտցնում էր նաև վնասակար յերկվություն:

Ինչպես տեսնում ենք, միությունները «գինվորական կոմունիզմի» չըջանում իրենց ուսերի վրա հսկայական աշխատանք են տանում, կատարելով բազմաթիվ պետական ֆունկցիաներ: Միությանն ապահովում էյին աշխատանքային դիսցիպլինան, մորիլիդացիայի էյին յենթարկում իրենց անդամներին ճակատի, պարենավորման խմբերի համար: Այդ բոլորը իր կնիքն էր դնում միութենական գործունեյության ձևերի և մեթոդների վրա: Այդ ժամանակաշրջանում «դեմոկրատական ցենտրալիզմի» սկզբունքները, վորի էյությունն այն է, վոր միութենական մարմինների ընտրությունները կատարվում են վարից վեր, իսկ ղեկավարությունը՝ վերից վար, — լինասվեցին հոգուտ «ցենտրալիզմի» ուժեղացման ի հաշիվ աշխտանքի դեմոկրատական մեթոդների թուլացման: Միություններին անդամակցելն այդ ժամանակ դարձավ մեխանիքական, պարտադիր, չնայած, վոր համամիութենական համադումարները նման վորոշումներ չէյին հանել: Միության անդամավճարները դանձվում էյին դրասենյակի միջոցով: Պատասխանատու աշխատավորների պակասության պատճառով, չնորհիվ նը-

բանց լափագույնների ճակատ մեկնելու,—միություններում առաջացնում էր վարչական մոտեցման մոմենտների՝ առաջադրումները կարգադրությունների ուժեղացումն։

Այս բոլորը միասին վերցրած բանվորների անդիտակից և կիսապրոպագանդիստների համար ջնջում էր տարբերությունը պետական մարմինների, գործարանային վարչությունների մի կողմից և մյուս կողմից՝ միությունների և գործարկումների միջև։ Բայց այն ժամանակ, յերբ թշնամին ամեն կողմից վրա յեր քշում, յերբ հարկավոր էր ճակատն ապահովել, յերբ քաղաքները սովի էին մատնված, յերբ կառավարելու, արտադրության, բաշխման մեջ պահանջվում էր խիստ ցետնրալիզացիա,—միություններն ուրիշ ճանապարհ, աշխատանքի այլ մեթոդներ ունենալ չէին և կարող։ Չնայած քաղաքացիական պատերազմի շրջանում նկատվող միությունների աշխատանքի բացասական մոմենտներին, արհեստակցական կազմակերպությունները հսկայական դեր խաղացին բանվորական մասսաների կազմակերպման և միացման գործում, ժողովրդական տնտեսության պահպանման և պրոլետարական հեղափոխության հաղթանակն ապահովելու գործում։

Միությունների աճումը, համարյա ամբողջ բանվորական մասսայի ընդգրկումը նպաստեցին Ռուսաստանում պրոլետարիատի առաջ կանգնած նոր խնդիրների իրականացմանը։ Յեթե 1917 թ. արհեստակցական միությունների 3-րդ կոնֆերենցիայի ժամանակ միությունների մեջ հաշվվում էր 1,475,429 կազմակերպված բանվորներ, ապա 1918 թ. 1-ին համագումարին ներկայացված էին 2,532,000, 1919 թ. 2-րդ համագումարին՝ 3,638,812, 1920 թ. 63-րդ համագումարին՝ 4,326,000 և 1921 թ. 4-րդ համագումարին՝ 8,485,800 անդամներ։ Վերահիշյալ տվյալները փայլուն և համոզեցուցիչ կերպով հերքում են մենչևիկներին կոծր այն մասին, թե պրոլետարիատի ղեկավարության միջավայրում արհեստակցական կազմակերպությունները ջախջախվեցին։ Այս աճումը, վոր կատարվում էր արտադրության կրճատման պայմաններում, աղացուցում է այն հսկայական ձգտումը դեպի արհմիությունները և վերջիններիս թափանցումը յերկրի ամենահեռավոր անկյունները, նրանց ընդգրկումը նոր, մինչև այդ ժամանակ դեռևս չկազմակերպված պրոլետարների և կիսապրոլետարների խմբերի։

Արհմիությունների շինարարության հարցում մեր արհեստակցական շարժումն անցավ արևմտա-լեվրոպականից։ Դեռևս 3-րդ կոնֆերենցիան դեմ արտահայտվեց համաքական միավորումներին և հոգուտ՝ շինարարության արտադրական սկզբունքին։ 1-ին համագումարը հաստատեց այդ վորոշումը, բայց «արտադրական» միության ճիշտ բնորոշումը չտվեց։ 2-րդ համագումարը, վորն իր վորոշումներով ներդաշնակություն, ղեկավարությունություն և նպատակահարմարություն մտցրեց պրոլետարիատի արհեստական կազմակերպությունների կառուցման մեջ, հայտնաբերեց արտադրական միության հետևյալ հատկանիշները. միությունը համախմբում է արդյունաբերության տվյալ ճյուղի բոլոր բանվորներին և ծառայողներին, անկախ նրանց կատարած ֆունկցիաներին, գանձարկղի կենտրոնացում, միության գործերի վարելը դեմոկրատական ցենտրալիզմի հիման վրա, աշխատանքի բոլոր կատեգորիաների համար աշխատանքի պայմանների ու տարիքների մշակումն մի միասնական կենտրոնից, շինարարության միատեսակ սկզբունք վերից վար, արտադրության տվյալ ճյուղի բանվորների և ծառայողների շահերի ներկայացուցչության արտաքին աշխարհի առաջ միասնական կենտրոնով։

Արտադրական սկզբունքով միություններ կառուցելը, վոր հնարավորություն է տալիս արդյունաբերության համապատասխան ճյուղում աշխատող կազմակերպված բանվորների հզոր կազմերը լիովին համախմբել մի միավորության մեջ, անպայմանորեն համապատասխանում են կապիտալիստական յերկրների պրոլետարիատի շահերին։ Կառուցման այդ սկզբունքը մեծացնում է գործարանատերերի դեմ տարվող պայքարի ուժը և հակադրում է նրանց, վորոնք իրենց կազմակերպությունները բոլորովին չեն կառուցում ըստ արհեստակցական հատկանիշների, վաճ թե բաժան բաժան, այլ ամբողջ ձեռնարկություններ և արդյունաբերության ճյուղեր ընդգրկող մասսայական բանակի կոմպակտ, միաձուլվ հզոր ուժը։ Կառուցման արտադրական սկզբունքը լիովին պահպանում է իր նպատակահարմարությունը նաև պրոլետարական ղեկավարության ժամանակ, յերբ միությունների հիմնական խնդիրն է դառնում արդյունաբերության և ժողովրդական տնտեսության վերականգնումն ու ամրացումը։ Շնորհիվ արհեստակցական շարքերի այս ձևի վերակառուցման, մենք 1919 թ. ունեյինք 32 համառուսական կենտրոնացրած միություններ, իսկ

3-րդ համազումարից հետո մնաց ընդամենը 23 համառուտական միավորումներ, այնինչ ղեռն 1918 թ. միայն Մոսկվայում կար 109 առանձին միություններ և Պետրոգրադում—66:

Միությունների համառուտական միավորումները վերջնականապես ձևակերպվեցին համամիութենական առաջին և յերկրորդ համազումարներին միջև և սկսեցին կառուցվել միասնական սխեմայով, վորով գործարանային կոմիտեները դարձան միութենական հիմնական բջիջներ: Գործարանային կոմիտեները միութենական մարմինների կազմի մեջ մտցնելը խոշոր նվաճում էր բանվորական և արհեստակցական շարժման համար: 1917 թ. և 1918 թ. առաջին կիսում գործարանային կոմիտեներն, ինչպես վերևում ցույց տվինք, գոյություն ունեյին անկախորեն: Դա առաջ էր դառնում նրանից, վոր առաջին շրջանում միությունները թույլ էյին և նրանք կառուցվում էյին համաբարական և արհեստակցական հատկանշերով և մի միության մեջ չէյին ընդգրկում ձեռնարկության բոլոր բանվորներին և ծառայողներին, նույնպես և նրանից, վոր նրանք արտադրության հարցերին ղեռն այն ժամանակ ղեմ ղեմաց չէյին կանգնել: Այդ բոլոր պատճառները նույնիսկ բանվորների վորոշ խմբերի մեջ, վորոնք տառապում էյին յուրատեսակ «ձախության հիվանդությամբ», առաջացնում էյին այն կարծիքը, թե արհեստակցական միություններն իրենց դարն անց են կացրել, վոր նրանք բուրժուազիայի ծնունդ են և վոր գործարանային կոմիտեների շարժումը մի ինքնուրույն, անկախ ու ամբողջական շարժում է, վոր պրոլետարական յերկրում տնտեսությունը կարող է և պետք է կառուցվի բացառապես գործարանային կոմիտեների հիմքի (բազայի) վրա:

Հոկտեմբերյան հեղաշրջումն ու միությունների կազմակերպչական ձևերի և խնդիրների փոփոխությունը վոչնչացրին գործարկումների և միությունների բաժան գոյության ամեն մի հիմք և այդպիսով ավելի ամուր կապեցին միությունները մասսաների հետ, ձեռնարկության մեջ միությանը տվին կազմակերպված հենարան: Արդեն 1918 թ. կիսին փաստորեն սկսվում է միությունների և գործարանային կոմիտեների ձուլումը. 2-րդ համազումարը հաստատում է գործարանային կոմիտեների կանոնադրությունը, և վորոշվում է նրանց կազմակերպչական դրությունը ընդհանուր միութենական կառուցվածքի մեջ, իսկ 3-րդ համազումարից հետո, յերբ ձեռնարկությունները կառավարելու ֆունկ-

ցիաները դուրս են գալիս գործարանային կոմիտեների իրավասությանից, վերջիններս վերջնականապես և անդառնալիորեն դառնում են այնպիսի մարմիններ, վորոնք ցածրում կիրառում են միության ղերկերի վերջին և իրենց համախմբած կազմակերպված բանվորների պահանջները և կարիքների ու չափը և զգալի հաշվառման հիման վրա ազդում են միութենական քաղաքականության վրա:

Արհեստակցական կազմակերպությունների ուղղահայաց դրժով ձևակերպելու հետ միասին (արտադրական միություններ) բնթանում էր և միջմիութենական կենտրոնները՝ Հ. Ա. Մ. Կ. Թ-ի, նահանգական արհմիութնությունները, արհեստակցական միությունների գալստական բյուրոները (գալստֆրայուն), շրջանային քաղաքագործությունների ազդեցության ամբողջումն ու ուժեղացումը: Այն ժամանակ, յերբ արհեստակցական միությունների առաջին համազումարին ներկայացված էյին արհեստակցական միությունների 48 խորհուրդներ, վորոնք բնագրկում էյին Ռուսաստանի ամբողջ կազմակերպված պրոլետարիատի մոտ 70 տոկոսը, — արհեստակցական միությունների 4-րդ համազումարին արդեն ունեյինք արհեստակցական միությունների 78 նահանգական խորհուրդներ, վորոնք համախմբում էյին 8,296 կազմակերպություններ, ի թիվս վորոց 1,307 նահանգական բաժիններ, 577 գալստֆրայուններ, 6,005 գալստական բաժանմունքներ, 427 շրջանային քաղաքագործություններ:

Միջմիութենական մարմինների նշանակության և ազդեցության նմանորինակ աճմանը նպաստում էր այն, վոր բոլոր հիմնական հարցերը — աշխատանքի կազմակերպման, նրա վարձատրության, պարենի մատակարարման և այլն՝ պետական միջոցների աղքատության, տնտեսության, կառավարելու և վարչականության խիստ կենտրոնացման պայմաններում, — կենտրոնացվում էր միջմիութենական մարմինների ձեռքում, վորոնց խորհրդային իշխանությունը ճանաչել էր իրեն միությունների մեջ համախմբված պրոլետարիատի կազմակերպված ներկայացուցիչները:

Ռազմական կոմունիզմի պայմաններում արհեստակցական շարժման և նրա կազմակերպչական ձևերի հետագա զարգացման ընթացքում նվազում են առանձին արտադրական միությունների դերը և աստիճանաբար ձևակերպվում է մի միասնական միություն, վորին կից և համառուտական առանձին միավորումները

դատնում են նրա սեկցիաները: Միութենական շինարարության մեջ այդ ուղղութիւնը իր արտացոլումը դտավ արհեստակցական միութիւնների 4-րդ համագումարի բանաձեւում 1921 թվին: Ինչոք նոր տնտեսական քաղաքականության կիրառումը ստիպեց, Վոր մեր արհեստակցական շարժումը թե իր գործունէության մեջ, և թե իր կազմակերպչական ասպարիդում գնա ուրիշ ճանապարհով, վորը յերկար վորոնումներից և տատանումներից հետազօվեց Հ. Ա. Մ. Կ. Խ-ի պլենումին, 1922 թ. փետրվարին:

ԱՐՇԱՐԺՄԱՆ ՆՈՐ ՈՒՂԻՆԵՐԸ

Անցումն զեպի խաղաղ շինարարութիւն.—Տնտեսության վիճակը.—Նոր տնտեսական քաղաքականութիւնը, նրա պատճառներն ու բովանդակութիւնը.—Միութիւնները նոր ուղիներում.—Պաշտպանութիւն բանվորների նյութական-իրավական շահերի.—Միութիւններն ու մասնավոր ձեռնարկութիւնները.—Աշխատավարձի կարգավորում, հալաքական պայմանագրեր.—Գործադուլային պայքար.—Միութիւնների մասնակցութիւնը արտադրության մեջ.—Վերաքննութիւն միութենական շարքերի.—Կամավոր անդամագրութիւն և անհատական մուծումն.—Աշխատանքի մեթոդներ.—Արտադրական միութիւնների նշանակութիւնն ու ժեղացում.—Մենչեիկներ զերր մեր արհեստակցական շարժման մեջ.—Նոր ուղիներին անցնելու արդյունքները.—Միութիւնների հետագա աշխատանքի խնդիրները և 6-րդ համագումարի վորոշումները:

Ռուսաստանի բանվոր դասակարգը յերեք տարվա հերոսական պայքարից և բազմաթիվ զոհեր տալուց հետո հաղթանակով դուրս լեկավ ըլտկաղայից (չրջապատումից), ինտերվենցիայից, քաղաքացիական պատերազմից: Այդ հաղթանակն ապահովելու գործում արհեստակցական միութիւնները աչքի բնկնող դեր են խաղացել: Միութիւններում կազմակերպված բանվորների լավագոյն ուժերը քաջութեամբ կռվում էին ճակատներում, իրենց քաջութեամբ և զեպի հեղափոխութիւն շահերն ունեցած հալատարմութեամբ իրենց հեռից քաջում, տանում էին բանակային-զլուղայիներին: Սովի տարտափը, վոր տարածվել էր քաղաքները և մասնավորապէս արդյունաբերական խոշոր կենտրոնների վրա, ալու կամ ալն չափով թուլացավ, մեղմացավ շնորհիվ արհեստակցական միութիւնների յեռանդի, վորոնք կազմակերպեցին պարենա-վորման խմբերի մի ամբողջ ցանց: Վրա հառավ խաղաղ շինարարութիւն շրջանը:

Այդ ժամանակ յերկրի անտեսությունը խիստ խախտւած էր։ Համարյա յոթ տարի տեղը իմպերիալիստական և քաղաքացիական պատերազմների հետեանքով ձեռնարկությունների տեխնիքական բարձրագոյնությունը (оборудование) լուրջ կերպով մաշվել էր։ Հռւմ նյութի և պատրաստի ֆարքիկանների պաշարը սղաւմէր էր։ Նախապատերազմական հետ համեմատած արդյունաբերության ընդհանուր արտադրական տրակտակ էր 7 անգամ։ Աղքատության պայմաններում, աշխատանքի արտադրողականությունը ըկնաւ։ 1918 թվի նկատմամբ, 1920 թ. մի բանվորի արտադրական նվազել էր 4 անգամ։ Աշխատավարձը, չնորձիվ դրամանիշների արժեքազրկման, պարենի պակասության և աշխատանքի աննշան արդյունքի, հասել էր նախապատերազմյանի 37 տոկոսին։ Գյուղացիական անտեսությունը, յերկրի պաշտպանության ծանրությունը կրելու և արդյունաբերական կենտրոններին ողնելու չնորձիվ, սեղմվել, փոքրացել էր։ 1916 թ. հետ համեմատած, ցանքախտարածությունը 1921 թ. կրճատվել էր 35 տոկոսով։ Կենդանի ինվենտարը խիստ պակասել էր։ Գյուղացիությունը գոհերի ճանադարձով ալլեւ ընթանալ չէր կարող։ Այնինչ Արեւմտյան Յեւրոպայում արագ հեղափոխական պայթյունի հույսերը չարդարացան։ Գերմանիայի բանվոր դատակարար պարտվեց։ Կապիտալի իր ստաճին ցնցումներից ուշքի չեկաւ և արտասահմանում սկսեց առաջնադասությունը բանվոր դատակարար ամենակենսական նըվաճումների և շահերի դեմ։ Հետեւաբար, զրաից սկսելով մարտական ողնություն ստանալու հույսը հետաձգվում էր անորոշ ժամանակով, մեր հանրապետության չընկալատուն ու մեկուսացումը համաշխարհային կապիտալի կողմից շարունակվում էր։

